

Վ.Գ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

**ԱԿՆԱՐԿՆԵՐ  
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ  
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ**

2

ԵՐԵՎԱՆ 2007





AMERICAN MUSEUM OF NATURAL HISTORY  
677 5th Avenue, New York 10022

ՄՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ETYMOLOGICAL STUDIES

Essays  
on Comparative Lexicology  
of the Armenian Language  
by  
H. H. H. H.

ARMENIAN NATIONAL ACADEMY OF SCIENCES  
H.ADJARIAN INSTITUTE OF LINGUISTICS

V.G. Hambardzumian

Essays  
on comparative Lexicology  
of the Armenian Language

*(Comparative-Typological Variativity)*

2

Yerevan 2007



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ.ԱՐԱՌՅԱՆԻ ԱՆՎ. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Գ. Համբարձումյան

**Ակնարկներ  
հայոց լեզվի  
համեմատական բառագիտության**

(Համեմատական-տիպաբանական տարբերակայնություն)

A 93804



Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվաբանության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ-809.198.1  
ԳՄԴ-81.2Հ  
Հ 205

Պատասխանատու խմբագիր՝  
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն.Մ.Սիմոնյան

Գրախոսներ՝  
բանասիրական գիտությունների թեկնածու Գ.Ռ.Գազինյան  
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Վ.Սուքիասյան

Համբարձումյան Վ.Գ.

Հ 205 Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության/ (Պատ.  
խմբ.՝ Ն. Մ. Սիմոնյան).– Եր.: Զանգակ-97, 2007. 64 էջ:

Աշխատությունը նվիրված է հայոց լեզվի պատմության և համեմատա-  
կան լեզվաբանության առանձին հարցերի:

Ներկայացվում են հ.-ե. տարբերակայնության և հայերենի տարբերա-  
կային ուսումնասիրության առավել կարևոր խնդիրները, առաջ է քաշվում  
հայերենի բնիկ արմատների տարբերակային ընկության հարցը, տրվում են  
հ.-ե. ծագման հայերեն (բարբառային) բառերի մոր, ինչպես նաև  
վերանայվող ստուգաբանություններ:

Գիրքը նախատեսվում է բանասերների, պատմաբանների և առհա-  
սարակ հայերենի և հայ ժողովրդի հին շրջանի պատմությամբ  
հետաքրքրվողների համար:

Հ  $\frac{4602020100}{0003(01)-2007}$  2007 թ.

ԳՄԴ-81.2Հ

ISBN 978-99941-1-394-1

© Համբարձումյան Վ., 2007 թ.

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Վերջին երեք-չորս տասնամյակում հնդեվրոպական (հ.-ե.) լեզուների ուսումնասիրությունը թևակոխել է նոր փուլ և շարունակում է առաջ գնալ նոր ընդգրկմամբ: Երևան են եկել այնպիսի աշխատություններ, որոնցում առաջ են քաշվում միանգամայն նոր խնդիրներ, նախկինում այս կամ այն չափով լուծում ստացած շատ հարցեր վերստին դառնում են ուշադրության առարկա ոչ միայն ճշգրտման, այլև առհասարակ վերանայման նկատառումով:

Համեմատական լեզվաբանության բնագավառում մշակվում են ուսումնասիրության ավելի իրական սկզբունքներ և մոտեցումներ, որոնք այլ բան չեն, քան համեմատաբանության մի շարք մեթոդների և օրենքների լրամշակում և կատարելագործում: Լեզվական երևույթների պատմականության և լեզուների ցեղակցության այնպիսի չափանիշներ են երևան բերվում, որոնք հիմնավորվում են նաև տիպաբանական արժանահավատության (վերիֆիկացիայի) տեսակետից [հմմտ. Jakobson 1957, նաև Якобсон 1963, 95-105, Гамкрелидзе-Иванов 1984 և այլն]:

Հայոց լեզվի նորագույն շրջանի պատմության որոշակի հարցեր դառնում են ուշադրության առարկա հատկապես նման հատկանիշներով կատարվող նորագույն ուսումնասիրություններում, ընդ որում հայերենի տվյալներին, ելնելով վերջիններիս հնավանդության (արխաիկության) հանգամանքից, հատկացվում է անհամեմատ լայն տեղ, տրվում է մեծ կարևորություն:

Ոչ միայն հ.-ե. հիմք-լեզվի վերականգնման, այլև ցեղակից լեզուների առանձնացման և ինքնուրույն կամ փոխադարձ շփումներով ընթացող զարգացման առանցքային հարցերը քննարկվելիս են եղել կա՛մ անփոփոխակալին, կա՛մ փոփոխակալին միավորների առնչությունների վերհանման և բնութագրման տեսակետից: Մի դեպքում իդեալականը համարվում է տեսական ընդհանրացումը, իսկ մյուս դեպքում՝ նույնպիսի առանձնացումը, տարբերակումը [Джаукян 1982, 5, 59-67, այլև Ջահուկյան 1987]:

Հայոց լեզվի համեմատական բառագիտության շատ հարցերի կարելի է անդրադառնալ ոչ միայն համեմատական-տիպաբանական, այլև այսպես կոչված տարբերակային ուսումնասիրության ընթացքում:

Մույն աշխատանքում ամփոփի ձևով անդրադառնում ենք հ.-ե. որոշ արձատների տարբերակայնության և հայերենի տարբերակային ուսումնասիրության կարևորագույն խնդիրներին՝ մի տեսակ հող նախապատրաստելով հետագա ավելի լայն ուսումնասիրության ձեռնամուխ լինելու համար: Այդ խնդիրների առաջընթացում անգամ ենթադրում է հայերենի տարբեր կարգի միավորների նոր, ավելի ծավալուն և մանրամասն ուսումնասիրություն: Այսպես, բառի արձատակագծության և ձևակագծության մի շարք հարցեր կարող են դառնալ ուշադրության առարկա որոշակի սկզբունքներից և մոտեցումներից ելնելով, և ըստ այդմ իրական հիմքեր կարող են ստեղծվել ոչ միայն նոր ստուգաբանությունների, այլև եղածների վերարծարծման և ճշգրտման համար:

Նկատի ունենալով հարցերի նման կարևորությունը՝ այստեղ քննության ենք առել հ.-ե. ծագման հայերեն արձատների տարբերակային վերականգման և տիպաբանական վերլուծության խնդիրը: Վերջինիս լուծումն ավելի մեծ հնարավորություն կարող է ընձեռել ոչ միայն հայերենի, այլև ցեղակից մյուս լեզուների արձատակագծության նոր բնութագրման համար:

Աշխատանքի մեջ տալիս ենք որոշակի թվով բառերի ստուգաբանություններ՝ ելնելով հատկապես տարբերակայնության սկզբունքից:

Հեղինակը խորին շնորհակալություն է հայտնում բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն.Մ.Սիմոնյանին՝ աշխատանքի ձեռագիրը կարդալու և արժեքավոր դիտողություններ անելու համար:

**Հ.-Ե. ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ  
ՏԱՐԲԵՐԱԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

1. Լեզվաբանության ուսումնասիրության առարկա հանդիսացող երևույթների կադապարային (բանաձևային) ամբողջությունն ընդգրկում է ոչ միայն համակարգային որոշակի օրինաչափություններ և լոկալաբանական ընդհանրություններ, այլև կառուցվածքային տարբեր կարգի առանձնահատկություններ և ոչ տիպական մասնակիություններ:

ա) Լեզվական երևույթները զարգացման անընդհատության (տարածամանկության) տեսակետից հանդես են գալիս ազատ, իսկ այս կամ այն փուլի (համաժամանակության) նկատառումով՝ լրացական բաշխման հարաբերության մեջ: Ցեղակցության կամ ծագումնային սերտության տարբեր աստիճան ներկայացնող լեզուների պատմության առանձին փուլերում այդ երևույթները գտնվում են անփոփոխակային (ընդհանրական) և փոփոխակային (տարբերակային) առնչության մեջ:

բ) Մինչև այժմ հ.-ե. լեզուներին նվիրված ուսումնասիրություններում ուշադրության կենտրոնում եղել են մեծ մասամբ լեզվական երևույթների անփոփոխակային (ընդհանրական) առնչություններին վերաբերող հարցերը: Եվ այդ նկատառումով առաջ են քաշվել մի շարք տեսություններ, երևան են եկել տարբեր դպրոցներ, մշակվել են առանձին մեթոդներ ու սկզբունքներ, սահմանվել են հնչյունական և այլ կարգի օրենքներ, կիրառվել են հիմնականում իրար լրացնող, երբեմն բացառող մոտեցումներ և այլն:

գ) Հ.-ե. լեզուների պատմությունն ավելի հին է, քան այն լեզվաբանական ուսումնասիրությունների հիման վրա այսօր պարզաբանված կամ բավարար չափով հիմնավորված կարելի է համարել: Այդ լեզուները, անկախ նախապատմական և պատմական փուլերում ունեցած ընդհանրությունից կամ մերձավորությունից, եղել են կոնկրետ ժամանակի մեջ իրենց դերն այս կամ այն չափով կատարած հաղորդակցման միջոց: Մեզ հասած կենդանի, ինչպես նաև միայն գրավոր աղբյուրներով և գրական հուշարձանների միջոցով հայտնի (այսինքն՝ մեռած) լեզուների ուսումնասիրությանը ձեռնամուխ լինելիս, կարծում ենք, ամենից առաջ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ այդ լեզուները եղել են բնական, կենդանի հաղորդակցման միջոց:

Ուստի դրանց նախապատմությունը կամ բուն պատմությունը ուրվագծելիս անհրաժեշտ է առաջնորդվել ոչ միայն անփոփոխակային (ինվարիանտ), այլև փոփոխակային (վարիատիվ) բանաձևումներով ու ձևակեր-

պումներով: Այդ լեզուների նախապատմական այս կամ այն վիճակի վերականգնումը ենթադրում է թե՛ զուգամիտումների (կոնվերգենցիայի) և թե՛ տարամիտումների (դիվերգենցիայի) ճանապարհով առաջ եկած երևույթների հարուցած խնդիրների լուծում: Այսպես, հ.-ե. լեզուները ևս, բնականաբար, կարող էին փոփոխվել և իրոք տարբերակվել են զարգացման արտաքին և ներքին գործոնների ու ազդակների հետևանքով:

դ) Եվ իբրև զարգացման նախ՝ հասարակական, այնուհետև՝ ժամանակային, տարածքային, ինչպես նաև (լայն ըմբռնումով) համակարգային գործոնների ու ազդակների դրսևորման արդյունք՝ անփոփոխակային և փոփոխակային ձևերն, իբրև լեզվի նշանային միավորներ, բնութագրում են տվյալ լեզուն իր առաջընթացի և տեղաշարժերի մեջ, ուրիշ լեզուների հետ ունեցած առնչությունների և փոխազդեցության պայմաններում [ավելի մանրամասն տե՛ս Համբարձումյան 1977, 7-9, 1978, 50-54, նաև 1981, 182-191 և այլն]:

ե) Հ.-ե. լեզուների ուսումնասիրության սկզբնական փուլերում մեծ ուշադրություն է դարձվում լեզվական երևույթների ձևային կողմին (արտահայտության պլանին): Հետագայում, հատկապես վերջին ժամանակներս համեմատաբար լայն ուշադրության առարկա են դարձել այդ երևույթների իմաստային (թեմատիկ) կողմին (բովանդակության պլանին) վերաբերող հարցերը՝ ի համամասնություն մյուս կողմի [հմմտ. Buck 1949, Dumezil 1968, Benvenist 1969, Гамкрелидзе-Иванов 1984 և այլն]:

զ) Լեզվաբանության մեջ տարբեր ժամանակներում լեզվական միավորների քննությունը կատարվել է կամ ձևային, կամ բովանդակային կողմին հիմնական ուշադրությունը դարձնելու ելակետից: Եվ պատահական չէ, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը հաճախ եղել են խիստ քննադատության առարկա՝ բնութագրվելով որպես ֆորմալիզմ, լոգիցիզմ և այլն: Տվյալ դեպքում անհրաժեշտ է համարվել խոսափելու ծայրահեղությունից, ավելին, բավարար չափով հաշվի չի առնվել այդ միավորների գործառական կողմը: Երևույթի ուսումնասիրության բավարար հիմունք կարելի է համարել այն, որ ելակետ ընդունվեն լեզվական միավորների ձևային (արտահայտության պլանի), իմաստային (բովանդակության պլանի) և գործառական (ֆունկցիոնալ պլանի) հնարավորությունները, որովհետև ուշադրության առարկա երևույթն աչքի է ընկնում ոչ միայն ձևաիմաստային դրսևորվածությամբ, այլև գործառական ծանրաբեռնվածությամբ:

Լեզվի յուրաքանչյուր մակարդակի նվազագույն միավոր ուշադրության առարկա է ամենից առաջ ըստ այդ երեք պլանների միասնության. դրանց հաշվի առնելն ավելի լայն հնարավորություն է ստեղծում համապատասխան միավորները (հնչույթները, արմատները կամ ձևույթները և

շարահյուսական միավորները՝ շարահյուսույթները) համեմատաբար համակողմանի ձևով ներկայացնելու համար [հմմտ. Макаев 1967, 26-33]:

2. Լեզուն, իբրև առանձին ուսումնասիրության առարկա, քննության է առնվում լեզվաբանական տարբեր գիտակարգերի կողմից: Եվ միանգամայն բնական է, որ վերջիններս ամենից առաջ առանձնացվում և դասակարգվում են բուն լեզվաբանական-իմացաբանական չափանիշներով:

ա) Տալով լեզվաբանական դիտակարգերի համեմատաբար հետևողական դասակարգումը՝ Գ.Ջահուկյանը, ոչ անկախ մախորդ ուսումնասիրողներից, այդ գիտակարգերի համար կարևորագույն հատկանիշ է դիտում ուսումնասիրության առարկայի ընդհանրականությունը (հասկացության ծավալը), պատմականությունը (հիմքում ընկած առարկայի քննություն տարածամանակության կամ համաժամանակության մեջ) և տարբերակայնությունը (անփոփոխակային՝ իդեալական վիճակ, կամ փոփոխակային՝ իրական վիճակ ներկայացնող առարկա):

Ընդհանուր տեսական այս մոտեցումով գրվում են առանձին ուսումնասիրություններ, որոնք ոչ միայն ունեն լեզվաբանական-իմացաբանական բնույթ, այլև վերաբերում են կոնկրետ լեզուների, ընդ որում հ.-ե. լեզուների, բնականաբար նաև հայերենի համեմատական քննության ոլորտում գտնվող տարբեր կարգի հարցերի պարզաբանմանը, առավել կնճռոտ խնդիրների լուծմանը [տե՛ս Джайкян 1976, 46-55, նաև 1978, 35-43, 1984, 59-65, 1999, 76-217 և այլն]:

Նախ նշենք, որ մեզ հետաքրքրող խնդրի տեսակետից այստեղ կարևոր նշանակություն ունի այն, որ նման դասակարգումը հիմնական գծերով համընկնում է մեր ավելի վաղ ունեցած պատկերացումներին [հմմտ. Համբարձումյան 1978, 50-51]: Այնուհետև, նման դասակարգմամբ հնարավորություն է ստեղծվում ըստ էության ձեռնամուխ լինելու հայերենի ոչ միայն համեմատական-տիպաբանական, այլև մեր կողմից վերջին ժամանակներս առաջ քաշվող տարբերակային-տիպաբանական քննությանը՝ հիմնված ինչպես մինչև այժմ հայտնի, այնպես էլ բոլորովին նոր հայտնի դարձած փաստերի և տեսությունների վրա: Այդուհանդերձ նկատենք, որ Գ.Ջահուկյանը գտնում է, որ «բուն իմաստով՝ տարբերակայնություն հասկացությունը, իր լայն մեկնաբանության մեջ, ընդգրկում է տարածական-տարածքային, ժամանակային-ժամանակագրական, հասարակական-գործառական, համակարգային-կառուցվածքային տարբերակներ» [Джайкян 1978, 42 ]:

բ) Նման մոտեցումը, եթե ոչ ամբողջովին, ապա գերակշիռ չափով հիմնված է մախորդ ուսումնասիրողների հայացքների և տեսակետների վրա (հմմտ. հնդեվրոպական բարբառների առանձնացումը, հնդեվրոպական «լեզ-

վաշրջանի» տարանջատումը, լեզուների տարածքային սահմանազատումը և այլն) [Meillet 1908, այլև 1931, Bonfante 1931, 69-185, Porzig 1954, ռուս. քարգմ. 1964, Георгиев 1958, 276-283, նաև Georgiev 1981 և այլն]:

Այս իրողությունն ակնհայտ է հատկապես այն դեպքում, երբ բննության է առնվում հնդեվրոպական բարբառների հարցը [հմմտ. Ջահուկյան 1987, 58-64, Широков 1986, 45 և այլն]: Նշենք նաև, որ մնան առանձնացման կամ տարբերակման, այլև առհասարակ լեզվաբանական տարբերակայնության (վարիատիվության) առումով կարևոր նշանակություն են ստանում հատկապես այն աշխատությունները, որոնք երևան են եկել ավելի ուշ, նվիրված են եղել հ.-ե. լեզուների, մասնավորապես վերջիններիս պայթական բաղաձայնների կրած փոփոխություններով պայմանավորված տարբերակմանը և բնութագրմանը (հմմտ. լեզուների դասակարգումն ըստ centum//satem < լատ. centum «հարյուր», ինչպես նաև decem//taihun < լատ. decem «տասը» հատկանիշներով առանձնացման և այլն) [Иванов 1958, 12-23, Hopper 1981, 133-142, նույնը Xоннеp 1988, 173-182, Mayrhofer 1983, նույնը` Мајрхофep 1988, 520 և այլն]:

գ) Եվ ի տարբերություն նախորդ, ինչպես նաև ժամանակակից այլ ուսումնասիրողների՝ Գ.Ջահուկյանը գտնում է, որ լեզվական երևույթների տարբերակայնությունը, իբրև լեզվաբանական, ընդ որում նաև համեմատաբանական ուսումնասիրության առանձին բնագավառ, ունի զարգացման որոշակի հեռանկարներ: Եվ ըստ այդմ կարելի է կարծել, որ հայոց լեզվի նախագրային, ինչպես նաև գրավոր շրջանի պատմության շատ հարցեր, մինչև օրս հավաստի լուծում չստացած բազմաթիվ խնդիրներ (օրինակ՝ հին գրական հայերենի վիճակով ավանդված պայթական բաղաձայնների առավել ստույգ բնութագրումը, հ.-ե. ձայնավորների՝ հատկապես երկարություն-կարճություն հատկանիշի իրական դրսևորումը հայերենում, հայերենի արմատակազմության բնույթը և արմատների առավել բնորոշ տիպերի առանձնացումը, մինչև այժմ հավաստի ստուգաբանություն չունեցող կամ ամենևին չստուգաբանված բառերի և արմատների ծագումնային պարզաբանումը և այլն) կարող են այս կամ այն չափով ճշգրտվել, ինչպես նաև ստանալ նոր լուծումներ:

3. Լեզվի տարբերակայնության գաղափարին համեմատաբար ուշ անդրադառնում է նաև Գ.Ջահուկյանը, երբ անցյալ դարի 60-ական թթ. կեսերին համապատասխան փաստերի և դրանց վերաբերյալ արտահայտված տեսակետների հիման վրա փորձում է քննել հայերենի և հ.-ե. մյուս լեզուների բաղաձայնական համակարգերի փոխհարաբերության հարցերը՝ գործնականում հատուկ ուշադրություն դարձնելով հայերենում արտացոլված

ստուգաբանական կրկնակներին և նրանց հնարավոր վերականգնումներին [տե՛ս Джаукян 1967, 300-313]:

ա) Լեզվական երևույթների տարբերակայնությունն ամենից առաջ ունի իմացաբանական-հոգեբանական հիմքեր. այն պայմանավորված է լեզուն կրողի ֆիզիկական և ֆիզիոլոգիական հատկանիշներով [հմմտ. Блум-Филд 1968, 35-86]: Լեզվաբանական առումով տարբերակայնությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ որոշակի բովանդակության պլան ներկայացնող հաղորդակցական (լեզվական) միավորների տարբեր արտահայտության պլանի առանձնացված ուսումնասիրություն: Ըստ այդմ գտնում ենք, որ Սոսյուրի լեզու և խոսք հակադրությունը պայմանավորված է ոճի (ոճական) առանձնակիությամբ, քանի որ ոճը հաղորդակցման միջոցի կիրառության տարբերությունն է [տե՛ս Համբարձումյան 1981, 184]: Եվ նման մոտեցումն ունի ընդհանուր լեզվաբանական, ճանաչողական և այլ կարգի նշանակություն:

Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև հետևյալ հանգամանքները:

Դեռևս նույն 60-ական թթ. սկզբներին Ա.Մարտինեն առանձին ուսումնասիրություն է նվիրել լեզվի կառուցվածքային տարբերակներին՝ ելնելով հատկապես իր այն դրույթներից, ըստ որոնց լեզվական տարբերակները կարող են քննության առնվել ոչ միայն ժամանակի և տարածության հատկանիշներով, այլև լեզվի կառուցվածքի, առհասարակ լեզվական համակարգի ներսում երևան եկող **փոփոխությունների** հաշվառումով [տե՛ս Martinet 1962, ռուս. քարգմ.՝ 1965, 450-464]: Սույն աշխատության մեջ մի կողմից՝ մեծ ուշադրություն է դարձվում լեզվի կառուցվածքի հետ կապված, վերջինիս ներսում նկատվող հնչյունական, իմաստային տարբեր դրսևորումներին (վարիացիաներին), իսկ մյուս կողմից՝ տեսականորեն դրվում են նաև տարածամանակային (տվյալ դեպքում՝ ժամանակային և տարածքային) քննությանն առնչվող որոշակի հարցեր [Martinet 1965, 450-455]:

Այնուհետև, ռուս լեզվաբանության մեջ նույնպես տարբերակային ուսումնասիրության հայեցակետն առաջ է քաշվում գրեթե նույն ժամանակում՝ կապված ամենից առաջ բառային տարբերակների քննության, ինչպես նաև այսպես կոչված «ուղղաբանության» («օրթոլոգիայի»), իբրև լեզվի համաժամանակյա ուսումնասիրության ինքնուրույն բնագավառի հնարավոր առանձնացման հետ [հմմտ. Ахманова 1957, 192-230, Филин 1963, 128-133, այլև Ахманова, Бельчиков, Веселитский 1960, 35-42, Семенюк 1965, 48-55 և այլն]: Քանի որ այստեղ բուն ուշադրության առարկան ռուսերենի համաժամանակյա քննության հարցերն են եղել (օրինակ՝ հնչյունական, այլև լեզվի մյուս մակարդակների միավորների

տարբեր կարգի զուգահեռների ընտրություն, լեզվական և ոճական տարբերակների ճիշտ և ընդունելի ձևերի նախապատվություն և այլն), ուստի դրանց ուսումնասիրման հատուկ գիտակարգի առանձնացման պահանջն ոչ այնքան իրավացիորեն, որքան միակողմանիորեն արժանանում է խիստ քննադատության: Մատնանշվում է հատկապես այն իրողությունը, որ նման հարցերն արդեն իսկ ուշադրության առարկա են լեզվի նորմայի, ոճաբանության և այլ գիտակարգերի մեջ [տե՛ս Скребнев 1961, 140-142]:

Ավելացնենք, որ ուսումնասիրության առարկա է դառնում նաև ռուսերենի, գերմաներենի և ուրիշ լեզուների բառային, ձևաբանական և այլ կարգի տարբերակների համաժամանակյա քննության հարցը [տե՛ս Горбачевич 1978]:

Համեմատաբար ավելի ուշ լեզվաբանական առանձին աշխատություններ են նվիրվում հ.-ե. լեզուների հնագույն վիճակի տարբերակային վերականգնման (ինչյունական, արմատակազմական, ձևակազմական և այլն), ինչպես նաև ցեղակից լեզուներում նույնպիսի արտացոլումների հարցերին [հմմտ. Гигинеишвили 1972, 48-52, Клычков 1975, 100-110 և այլն]:

բ) Գ.Ջահուկյանը հետազայում ևս հատուկ ուշադրություն է դարձնում հայերենի ստուգաբանական կրկնակների, այլև զուգահեռ ձևերի՝ փաստական նյութն ըստ հնարավորին համալրելով հատկապես բարբառների ընձեռած տվյալներով [Djahukian 1983, 23-34, այլև 1985, 151-160, Джаякян 1983, 5-116, նաև 1984, 146-160, Ջահուկյան 1976, այլև 1987, 252-265, 363-382, Միմոնյան 1979, Սուրիայայան 1986 և այլն]:

գ) Մեզ հետաքրքրող խնդրի առումով առավել կարևոր նշանակություն ունի հայերենի, որպես հ.-ե. առանձին լեզվի, առանձնացման, այլև վաղնջահայերենից հին հայերենին անցման փուլերում ունեցած բարբառային հնարավոր տարբերակների քննությունը: Այն, որ նախագրային հայերենի տարբեր փուլերում կարող են եղած լինել բարբառային տարբերակներ, որոնք այս կամ այն չափով հիմք են հանդիսացել ընդհանուր հայերենի համար, չի կարող կասկած հարուցել [հմմտ. Патканов 1869, 1875 (երկիցս), 1882, 1884 և այլն, Мсерианц 1897, 1901, նաև Մսերեանց 1898, 1899 և այլն]: Այլ խնդիր է, թե հայերենագիտության ներկա պայմաններում որքան է ուշադրություն դարձվել այդ հարցին:

Այստեղ մի կողմից բարբառային տարբերակները քննարկվելու են բաղաձայնների տեղաշարժի, նրանց առաջին քմայնացման և այլ երևույթների հետ կապված, ձևակազմական և բառակազմական (արմատակազմական) զուգահեռների մեջ, մյուս կողմից՝ ստանդարտ լեզվի և բարբառների ունեցած տարբերությունների, գրական լեզվի ներսում կառուցվածքային

օրինաչափությունների կողքին ի հայտ եկող առանձնահատկությունների տեսակետից:

Հայերենի տարբերակային-տիպաբանական ուսումնասիրության տեսակետից նման հարցերին անդրադառնալը նոր խնդիրներ է առաջադրում:

4. Լեզուների պատմությանը, նրանց առնչություններին վերաբերող երևույթների բնությունը կարող է դառնալ առանձին ուշադրության առարկա: Եվ Գ.Ջահուկյանը տարբերակայության հատկանիշով առաջնացնում է՝ 1) գիտակարգեր, որոնք ուսումնասիրում են անփոփոխակայնության երևույթը (որպես որևէ իդեալական վիճակ), որն ամենից շատ հանդես է գալիս իբրև ստանդարտ (օրինակ՝ գրական լեզու), կամ էլ վերացարկման որոշակի աստիճանով ձևակերպվում է որպես այդպիսին (օրինակ՝ համընդհանուր լեզու, վերականգնվող նախալեզու, մեքենական քարգմանության լեզու) և այլն, 2) գիտակարգեր, որոնք բնության են առնում երևույթի տարբերակայնությունը (փոփոխակայնությունը), այսինքն՝ տվյալ լեզվի կամ առհասարակ լեզուների գանազան կարգի տարբերակները (օրինակ՝ անփոփոխակային լեզվաբանություն, փոփոխակային կամ տարբերակային լեզվաբանություն) և այլն [Джаукян 1978, 42]:

ա) Սույն դասակարգման մեջ մասնավորապես նկատի է առնվում այն, որ տարբերակայնությունը (փոփոխակայնությունը), եթե այն հասկանում ենք լայն իմաստով, ընդգրկում է տվյալ լեզվի կամ առհասարակ լեզուների տարածական-տարածքային, ժամանակային-ժամանակագրական, հասարակական-գործառական և համակարգային-կառուցվածքային տարբերակները, որոնք էլ կարող են հանդես գալ կամ միասնաբար և զուգահեռաբար, կամ առանձին-առանձին՝ կապված ուսումնասիրության առարկայով (օբյեկտով) պայմանավորված կոնկրետ մոտեցումների հետ [Джаукян 1978, 42-43, այլև Համբարձումյան 2001, 203-218]: Ավելին, դրանք հ.-ե. և այլ տիպի լեզուների առանձնակի կամ հարաբերակից ուսումնասիրության առումով երևան են գալիս իբրև ծագումնաբանական, ինչպես նաև տիպաբանական տարբերակներ՝ անկախ այդ լեզուների (մերձավոր կամ հեռավոր) ցեղակցության աստիճանից:

Այնուհետև, լեզուների նման հարաբերակցությամբ ուսումնասիրության դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն նրանցում հանդես եկող երևույթների համաժամանակյա կամ տարաժամանակյա դրսևորվածությունը, այլև հարացուցային և շարակարգային ընդգրկվածությունը, ինչպես նաև պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ այդ լեզուները գտնվում են որոշակի զարգացման մեջ կամ դադարել են կենդանի հաղորդակցման միջոց լինելուց: Նրանցում տեղի ունեցող փոփոխությունները (տարբերակումները)

արդյունք են արտալեզվական գործոնների և ներլեզվական ազդակների (լայն իմաստով՝ լեզվական գործոնների), այլև ժամանակային այս կամ այն կտրվածքում դրանք կարող են դիտվել որպես հարաբերականորեն ընդհատված վիճակի դրսևորումներ [Համբարձումյան 1978, 50-54]:

բ) Մենք հակված ենք կարծելու, որ նման տարբերակներն ամենից առաջ բնութագրվում են իբրև լեզվական ինքնուրույն երևույթներ՝ առնված իրենց անընդհատ զարգացման մեջ, ինչպես նաև ուրիշ լեզուների համապատասխան երևույթների հետ ունեցած այս կամ այն կարգի առնչությունների պայմաններում: Այնուհետև, այդ առնչությունները կարող են գոյություն ունենալ թե՛ ցեղակից և թե՛ ոչ ցեղակից լեզուների միջև, ընդ որում ինչպես մերձավոր, այնպես էլ հեռավոր ցեղակցության պայմաններում, նոստրատիկ ընդհանրությունների կամ հնարավոր ընդհանրացումների հաշվառումով:

Այսպես, հայերենը տարբեր ժամանակներում շփվել է ոչ միայն ցեղակից, այլև ոչ ցեղակից (կամ որպես այդպիսին դիտվող) լեզուների հետ, որի հետևանքով ուրիշ լեզուներից հայերենին (բնականաբար նաև հայերենից այլ լեզուներին) են անցել բառային, արմատական, ածանցական և այլ կարգի այնպիսի իրողություններ, որոնք հայերենի բնիկ ձևերի հետ, իբրև համարժեքներ, հանդես են եկել որպես տարբերակներ: Վերջապես, ժամանակի ընթացքում դրանք կան գործառել են իբրև տարբերակային, զուգահեռ ձևեր, կան ինչ-ինչ պայմաններում հանդես են բերել գերակայություն միմյանց նկատմամբ, բացառել մեկը մյուսին:

գ) Ըստ այսմ, հայոց լեզվի պատմության արդի խնդիրներից մեկն էլ լեզվական նման տարբերակների ուսումնասիրությունն է՝ նպատակ ունենալով այդ առնչությունների բացահայտումը, հ.-ե. ընդհանրության շրջանից ժառանգված և ինքնուրույն զարգացման ընթացքում ձեռք բերված երևույթների քննությունը: Լեզվական տարբերակայնությունը (վարիատիվությունը) ուսումնասիրության նոր հեռանկարներ նախանշող բնագավառի հնարավորություններ ունի՝ առնված ոչ միայն հ.-ե., այլև հեռավոր ցեղակցության, ընդ որում նաև նոստրատիկ լեզուների համեմատական և տիպաբանական քննության հայեցակետից:

5. Հայերենը, իբրև հ.-ե. լեզու, ընդգրկում է լեզվական այնպիսի տարբերակներ (վարիանտներ), որոնք գործառելիս են եղել թե՛ նախագրային ժամանակաշրջանում, թե՛ գրավոր շրջանում: Մինչև այժմ չունենք այդպիսի տարբերակների առանձին և ամբողջական ուսումնասիրությանը նվիրված հատուկ աշխատություն: Երկարատև պատմություն ունեցող, հ.-ե. լեզուների մեջ բավականին արխայիկ գծեր պարունակող [Гамкрелидзе-Иванов 1984, 41] և լեզվական տարբերակներով համեմատաբար հարուստ լեզու հանդիսա-

ցող հայերենն այսօր ամենից առաջ մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել մնան առանձնահատկություններով:

Այնուհետև, հայոց լեզվի համեմատական ուսումնասիրության արդի պայմաններում լեզվական տարբերակների քննությունը մի կողմից ենթադրում է նախկինում մշակված մեթոդների՝ ըստ հնարավորին գործադրում, կուտակված փաստերի և դրանց վերլուծության առանձին սկզբունքների նկատմամբ նոր մոտեցում, իսկ մյուս կողմից՝ տեսական նոր սկզբունքների առաջադրում, նոր մոտեցումների մշակում, նոր մեթոդիկայի կիրառում և այլն [Համբարձումյան 1998, 11-13, այլև 2001, 202-218, Амбарцумян 2001, 21-22, Համբարձումյան 2003, 125-127]:

ա) Գ.Ջահուկյանի կողմից հայերենում առանձնացվող ստուգաբանական կրկնակները և զուգահեռ ձևերն իրական հիմք են ստեղծում տարբերակայնության (վարիատիվության) լայն, նոր սկզբունքներով ու մոտեցումներով ուսումնասիրության ձեռնամուխ լինելու համար: Այդ կրկնակներն ու զուգահեռ ձևերն ի հայտ են գալիս իբրև ժամանակային, տարածքային և գործառական հատկանիշներով բնութագրվող տարբերակներ: Ավելին, այդ և մնան ձևերի ծագումնաբանական մեկնաբանությունը և համեմատական վերլուծությունը, առնված ժամանակային բաշխման, տարածքային բաժանման և գործառական առանձնացման մեջ, ցույց են տալիս, որ դրանց մի մասը արդյունք է ժամանակային որոշակի կտրվածքում գործած օրենքների, երևան է եկել հայերենի այս կամ այն բարբառային տարածքում, այլև ունեցել է գործառական որոշակի ոլորտ, իսկ մյուս մասը եղել է շեղումներ կամ բացառություններ այդ օրենքներից, ոչ այնքան բնորոշ բարբառային մյուս տարածքներին, չի ունեցել գործառական որոշակի ոլորտներ:

Այնուհետև, հայոց լեզվի համապատասխան իրողությունների ավելի լայն, նոր սկզբունքներից բխող ուսումնասիրությունը, եթե նկատի ունենանք գրական հուշարձանների, ընդ որում նաև բառարանների և համաբարբառների, ինչպես նաև բարբառների հնագույն տվյալների մանրամասն հավաքագրումը և դասակարգումը, երևան է բերում նոր տվյալներ, հիմք տալիս ավելի հանգամանալից և ամբողջական վերլուծությունների համար: Նկատի ունենք նաև այն, որ հ.-ե. լեզուներին նվիրված նորագույն ուսումնասիրությունները, որոնք գրվել են անցյալ դարի 70-ական թթ. սկսած, և որոնցում հայերենի տվյալները քննության են առնվում բոլորովին նոր մոտեցումներով, մեծապես նպաստում են հայերենի տարբերակային ձևերի ավելի լայն ուսումնասիրմանը՝ կապված ոչ միայն հ.-ե. արմատների նոր տիպի վերականգնումների, այլև վերջիններիս գործում հայերենի հնագույն տվյալների ավելի ճիշտ օգտագործման հետ:

բ) Հ.-ե. լեզուների համեմատական և տիպաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախահնդեվրոպական վիճակի համար ևս անհրաժեշտ է լինում վերականգնելու հնչյութային, արմատակազմության, ձևությային և բառային-ձևաբանական տարբերակներ: Ավելին, այնքան էլ հեշտ չէ պատկերացնել, թե ցեղակից լեզուները բացարձակապես նույն կերպ են առանձնանում նախահնդեվրոպական վիճակից, կամ էլ հնարավոր է վերականգնել նախահնդեվրոպական, առավել ևս ընդհանուր հնդեվրոպական մի այնպիսի վիճակ, որից կարելի լիներ ցեղակից լեզուների նախ՝ բարբառային խմբակցությամբ բաժանումը, այնուհետև՝ առանձնացումն այս կամ այն խմբակցության ներսում:

Ուստի հ.-ե. լեզուների համեմատական և տիպաբանական տվյալները թույլ են տալիս վերականգնելու նաև տարբերակային ձևեր, որոնցից կարող էին առաջանալ ցեղակից լեզուների համապատասխան ձևերը: Վերջիններս առանձին լեզուներում, բնականաբար, ներկայանում են կամ անփոփոխակային, կամ փոփոխակային ձևերով՝ պայմանավորված ինքնուրույն զարգացման որոշակի հանգամանքներով:

Ըստ այսմ, հայերենի տվյալները հնարավորություն են ստեղծում ավելի մեծ թվով տարբերակային ձևեր համեմատելու նախահնդեվրոպական վիճակի համար վերականգնվող տարբերակային ձևերի (արմատների, ածանցների և այլ կարգի միավորների) հետ, ինչպես նաև ամրապնդելու մնաց վերականգնումների հավաստիությունը, ավելի որոշակի դարձնելու դրանց սահմանները [իսմտ. Гамкрелидзе-Иванов 1984, 200, 221-223, 263 և այլն]:

զ) Հայերենում մինչև այժմ առանձնացված ստուգաբանական կրկնակներն ու զուգահեռ ձևերը արդյունք են բաղաձայնների տարբեր կարգի հերթագայությունների: Գ.Ջահուկյանի բերած ցանկում մնան միավորների թիվն անցնում է մի քանի հարյուրի սահմանները [Джаукян 1967, 300-313], իսկ մեծ մասը տարածքային հատկանիշով բնութագրվող տարբերակներ են: Վերջիններս էլ հատուկ ուշադրության առարկա են դառնում Գ.Ջահուկյանի մեկ այլ աշխատության մեջ [Djahukian 1985, 151-160]: Նկատենք, որ գրական և բարբառային զուգահեռ տարբերակները հայերենում բավականին շատ են, քան ներկայացված են եղել մինչև այժմ երևան եկած ուսումնասիրություններում: Ուստի հետագա աշխատանքների ընթացքում, բնականաբար, անհրաժեշտ է ոչ միայն համայրել նախորդ ուսումնասիրողների կողմից կազմված ցանկերը, այլև լեզվական ողջ նյութը բերել տեսական համեմատաբար ավելի լայն ընդգրկումով:

Հայերենի հնչյունական, արմատային և բառային տարբերակներն այլ բան չեն, քան հ.-ե. ընդհանրության շրջանից եկող, ինչպես նաև այդ ընդհան-

րությունից առանձնացած լեզվի, իբրև հ.-ե. ինքնուրույն բարբառի, այնպիսի դրսևորումներ, որոնք մի կողմից՝ արտացոլում են հ.-ե. շրջանին բնորոշ տարբերակայնությունը (վարիատիվությունը)՝ կապված իմաստային տարբերակման, հոմանիշային, համանունային և այլ կարգի առանձնացումների հետ և այլն, մյուս կողմից՝ այս կամ այն չափով պահպանում են վերջինիս բնորոշ ինչ-ինչ գծեր և առանձնահատկություններ:

Գ.Ջահուկյանը, ի միջի այլոց, նախագրային շրջանի հայերենի տարբեր փուլերում գործածված նման տարբերակները դիտում է իբրև լայն իմաստով բարբառային արխաիկ երևույթներ՝ նշելով, որ դրանց «բազմակողմանի ուսումնասիրությունը և ժամանակագրական բաշխումը, մանավանդ նախագրային շրջանի համար, ավագայի գործ է. գիտության զարգացման արդի փուլում կարելի է անել միայն ամենաընդհանուր դիտողություններ» [Джаукян 1984, 252]:

Այսպես, հայերենում «ցնել, քափել, հոսեցնել», «ցված, լեցուն», «լի (լինել)» ընդհանուր և նախնական, այլև հետագա ձեռքբերում հանդիսացող «տարածվել, փռվել, լայնանալ», «տարածք, փռվածք» և այլն իմաստների նշանակման համար ունենք՝ 1) հեղ-, հոլ-, հալ, 2) յեղ-, յուլ-, յըղ-, 3) լի(\*-ղի), (զ)եղ-, ող, 4) հաղ, հող, 5) ալ-, աղ-, հ(ը)լ- և այլն արմատները, որոնցով կազմվել են մի շարք բառեր և բառաձևեր՝ գործածված հայերենի գրական և բարբառային տարբերակներում, իրենց նախնական դրսևորումները, ամենայն հավանականությամբ, ունենալով նախագրային շրջանում: Ուստի կարելի է կարծել, որ դրանք արմատական տարբերակներ են ոչ միայն նախագրային և գրավոր շրջանի հայերենի արմատակազմության և իմաստային տարբերակվածության (ընդհուպ համանունության աստիճանի առանձնացման) առումով, այլև այն տեսակետից, որ դրանք արտացոլում են հ.-ե. ընդհանրության շրջանից եկող, ընդ որում հնչյունական և արմատակազմության տարբեր հիմունքներով բացատրվող, սակայն իմաստային համարժեքությամբ աչքի ընկնող տարբերակայնությունը:

Այնուհետև, նկատենք նաև, որ անցյալի հետագոտողները գերակշիռ մասով ստուգաբանել են այդ արմատները՝ դրանք հանգեցնելով հ.-ե. արմատի այս կամ այն տարբերակին: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ երևույթին ավելի նոր, տարբերակային քննության հայեցակետից մոտենալու դեպքում հաստատվում է ոչ միայն նախկին ստուգաբանությունների մեծ մասը, այլև իրական և անհերքելի հիմք է ստեղծվում նոր բառերի ստուգաբանության համար: Մինչև այժմ որևէ ստուգաբանություն չունեցող որոշակի թվով արմատներ կամ բառեր դառնում են ծագումնաբանորեն հասկանալի և վերծանելի, որոնց էլ անդրադառնալու ենք առանձին:



Եթե հիշյալ տարբերակային արմատների հարցին անդրադառնում ենք մնան մոտեցումով, ելնում ենք ուսումնասիրության որոշակի սկզբունքներից, ապա պարզվում է, որ հայերենի հիշյալ արմատները արտացոլում են հ.-ե. \*p<sup>[h]</sup>el-H-; \*p<sup>[h]</sup>l-cH- և \*p<sup>[h]</sup>l-H- արմատական տարբերակների, որոնք վերականգնվում են ոչ միայն այդ, այլև իրենց ածանցական ձևացումներով: Սրանք այլ բան չեն, բան արմատի բաղադրության տարբեր տիպեր, այլ կերպ ասած՝ հ.-ե. շարժական ձայնդարձի (Schwebeablaut) տարբեր աստիճան ներկայացնող արմատներ՝ առնված կոկորդային (լարինգալ) բաղադրիչ ածանցի հետ միասին [հմմտ. Anttila 1969, 145-147, apud Гамкрелидзе-Иванов 1984, 232-242]:

Ի դեպ՝ նկատենք, որ հ.-ե. ձայնադարձի առաջին աստիճան ներկայացնող \*p<sup>[h]</sup>el-H- արմատի հայերեն արտացոլումները լրացուցիչ կերպով ապացուցում են, որ արմատի այդ տիպը միայն հնդիրանական լեզուներին չէ, որ բնորոշ է, այլ յուրահատուկ է նաև հայերենին, ուստի վերանում է այն առարկությունը, որ բերում է Ռ.Անտիլան, թե այդ արմատը հազիվ թե ընդհանուր եղած լինի հ.-ե. շրջանի համար [հմմտ. Гамкрелидзе-Иванов 1984, 234-235]:

Այսպիսով, ստացվում է, որ հիշյալ արմատական տարբերակների հայերեն արտացոլումների թիվը մեծանում է՝ ի հաշիվ մինչև այժմ չստուգաբանված կամ անհայտ ծագման համարվող բառ(արմատ)ների հնարավոր ստուգաբանության: Ըստ այդմ էլ հաստատվում են հնչյունական այնպիսի նոր օրենքներ, որոնք ոչ միայն լրացնում են մինչև այժմ հայտնի օրենքները (հաստատված Հյուբշմանի և նրա դպրոցի հետևորդների կողմից), այլև կարող են իրական հիմք հանդիսանալ հայերենի տարբերակային արմատների ժամանակային, տարածքային և գործառական, ինչպես նաև սրանց հետ կապված այլ կարգի, ավելի մասնավոր հանգամանքներով պայմանավորված դրսևորումների լայն ուսումնասիրության համար (այդ արտացոլումներին անդրադառնում ենք առանձին):

դ) Հայոց լեզվի համեմատական-տարբերակային ուսումնասիրությունը, մյուս կողմից, որոշակի հնարավորություն է ստեղծում ավելի լիակատար պատկերացում ունենալու հ.-ե. ընդհանրությունից ժառանգություն մնացած լեզվական երևույթների ոչ միայն ինքնուրույն զարգացման, այլև ժառանգորդական գծերի պահպանման վերաբերյալ: Բառարմատի և առանձին բառաձևերի հնչյունական, իմաստային և այլ կարգի տարբերակման հետևանքով հայերենում ժամանակի ընթացքում առաջ են գալիս և ինքնուրույն գործածության մեջ են մտնում այնպիսի բառեր ու բառաձևեր, որոնց գրեթե նույնարժեք վերականգման շնորհիվ է հնարավոր լինում խոսելու դրանց

ծագումնային ընդհանրության, այլ կերպ ասած՝ այս կամ այն արմատից կամ արմատական տարբերակներից առաջացած լինելու մասին:

Այսպես, «կենդանություն» (ավելի կոնկրետ իմաստով՝ «կենդանական և բուսական աշխարհ») ըմբռնման համար վերջին ժամանակներս վերականգնվում են հ.-ե. \*k<sup>o</sup>i-, \*k<sup>o</sup>ci- տարբերակային արմատները, որոնք ընդհանրության շրջանում ամենայն հավանականությամբ պիտի հանդես եկած լինեն ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային (ածանցական, ձևակազմական և այլն) բաղադրություն ներկայացնող ձևերով [հմմտ. Курилович 1971, 122-126]: Սենք հակված ենք կարծելու, որ հիշյալ տարբերակային արմատներից, ինչպես նաև դրանց հիման վրա բաղադրված ձևերից են ծագում հայերենի գրական և խոսակցական (նաև բարբառային) տարբերակներում լայնորեն գործածվող այնպիսի ձևեր, որոնք առհասարակ վերաբերում են «կենդանական աշխարհ» և «բուսական աշխարհ» ոլորտներին:

Ըստ այդմ հայերենում կարելի է առանձնացնել հետևյալ երկու կարգի արմատներն ու արմատական ձևերը:

- 1) Կե(ա)-/կեա-, այլև կեաց- (կեց-), կեան- (կեն-), կեանս- (կենս-), կեանց- (կենց-), կենդ- (կենդան-) և այլն [հմմտ. Աճառյան 1973, 564-565, Ջահուկյան 1987, 129-209 և ուրիշներ]:
- 2) Ծիլ-//ծաղ- (<\*ծի-, \*ծա-) ինչպես նաև Ծեղ-, Ծիղ-, Ծիւղ, (հմմտ. ըն-ձիւղ), Ծեղ-, Ծիղ-, Ծիւղ-, Ծող, շիղ-, շիւղ-, Ծող-, Ծեղ- (հմմտ. Ծեղ-ուն), ցող- (իմա՝ ցող-ուն կամ ցող-ուն) և այլն [հմմտ. Աճառյան 1973, 435, 438-439, 463, 1977, 203-204, 517-518, 1979, 460, 466 և այլն, Bedirian 1975, 451-459, Ջահուկյան 1987, 124-125 և ուրիշներ]:

Նախ, բերված արմատներն ու արմատական ձևերը ներկայանում են կա՛ն պարզ, կա՛ն բաղադրյալ ձևերով, կրում են ձայնավորի կամ բաղաձայնի հետ կապված տարբեր կարգի փոփոխություններ: Այնուհետև, դրանք իրենց փոփոխակային կամ նույնական արտացոլումն ունեն կա՛ն միայն գրական լեզվում, կա՛ն նաև բարբառներում, ընդ որում գրական հուշարձաններին բնորոշ գրչագրական որոշակի տարբերություններով (օրինակ՝ ցողուն, նաև ցաղուն//ցողուն և այլն): Այստեղ նկատի պետք է ունենալ նաև այն հանգամանքը, որ հիշյալ արմատների մի մասը մինչև օրս չունի իր հավաստի ստուգաբանությունը:

Իմաստաբանական որոշակի ոլորտներ ներկայացնող նման ձևերի տարբերակային-ծագումնային քննության դեպքում որոշակի հնարավորություն է ստեղծվում հաստատելու հնչյունական ավելի ստույգ համապատասխանություններ, ինչպես նաև կա՛ն հիմնավորելու ինչ-որ չափով հավաստի,

կան բացահայտելու դեռևս որևէ ստուգաբանություն չունեցող արմատների կամ բառերի բնույթն առհասարակ:

Վերը բերված իմաստային (թեմատիկ) խմբերում տարբերակային ձևերն ամենից առաջ աչքի են ընկնում բառասկզբի ձայնավորից առաջ գտնվող դիրքում պայթական//հպաշփական հակադրությամբ. հմմտ. հայ. կին //ծին <հ.-ե. \*k'en- [տե'ս Гамкрелидзе-Иванов 1984, 41-42]: Հպաշփական բաղաձայններով տարբերակներն, իրենց հերթին, երևան են բերում խլություն//ոչ-խլություն, ինչպես նաև շնչեղություն//ոչ-շնչեղություն հակադրությամբ տարբերակվածություն: Վերջին կարգի հակադրությամբ ձևերն առհասարակ լայն տարածում ունեն հայերենի թե՛ գրական և թե՛ խոսակցական (բարբառային) տարբերակներում [տե'ս Ջահուկյան 1967, 167 և այլն]:

Այստեղ նկատի ունենք նաև այն, որ հայ. կին բառը եզակի գործիական և հոգնակի բովում առհասարակ թեքվում է ա (կանամք, կնաւ, կանայք <հ.-ե. \*k'°en-, ինչպես նաև \*k'°(e)naH<sub>2</sub>-s-), իսկ եզակի բովի մյուս ձևերում ո (կնոջ, կնոջէ) հոլովիչներով, որոնք առաջ են բերում հին գրական հայերենի համակարգում ձևահնչության խմբերակվածություն՝ կապված հատկապես վաղնջահայերենից եկող ավելի շուտ հավաքականության, քան թե հոգնակիության թեքականական իմաստի արտահայտման հետ [հմմտ. Ջահուկյան 1959, Туманян 1978, 306, Гамкрелидзе-Иванов 1984, 185, 758]:

Այնուհետև, «կենդանական աշխարհ» իմաստային (թեմատիկ) խմբում ևս նկատելի է պայթական//հպաշփական հակադրությամբ տարբերակվածություն՝ կոնկրետ դեպքում կապված մարմնի մասի անվանման հետ, մարմնի վերին և ստորին վերջույթների հարաբերությամբ. հմմտ. կռուն //ճռուն <հ.-ե. \*gēu-, նաև \*keu- [տե'ս Джаукян 1967, 68, 167, 199 և այլն, նաև Աղայան 1974, 88-91, 102-108, Հաննեյան 1979, 154, 158]: Այդ և դրանց հարող արմատները հիմք են հանդիսացել ոչ միայն գրական հուշարձաններում, այլև բարբառներում կազմված, օրինակ, կռնակ, կռնատ, ճռնիկ («ոտքը տակը դնելով ցած՝ վայր գցելը» – Մուշ, Ալաշկերտ) և ուրիշ շատ ձևերի համար:

Ուստի նկատենք, որ հայերենի ոչ միայն գրական և խոսակցական (բարբառային), այլև ժամանակային, տարածական տարբերակներում առկա են մնալ հակադրությամբ բազմաթիվ բառարմատներ և բառեր, որոնց մի զգալի մասը դեռևս չի արժանացել ծագումնային, առավել ևս տարբերակային մոտեցումով համեմատական-տիպաբանական ուսումնասիրության [հմմտ. Միսոնյան 1979, 188-248]: Վերջին ժամանակներս երևան եկած այս կարգի լավագույն աշխատանքներից մեկում մնալ տարբերակվածությունը դի-

տարկվում է իբրև հնչյունական և բառակազմական հնաբանությունների դրսևորում՝ ի համեմատություն հին գրական հայերենի կանոնական համակարգի, ընդ որում համեմատաբար մեծ ուշադրություն է դարձվում հնչյունական մակարդակում տեղի ունեցած տարբերակվածությանը [տե՛ս Սիմոնյան 1979, 210-248]:

Նախագրային հայերենում տեղի են ունեցել ոչ միայն բաղաձայնների, այլև ձայնավորների այնպիսի փոփոխություններ, որոնք հ.-ե. ընդհանրության շրջանի արմատի տարբերակների, այլև հայերենի ինքնուրույն զարգացման ընթացքում հանդես եկած միևնույն արմատի տարբերակվածությանը ձևավորված և իմաստաբանորեն առանձին, իրարից հեռու ոլորտներ կազմող բառեր և բառարմատներ են:

ե) Հայերեն բառերի և բառարմատների ծագումնաբանության և ուրիշ լեզուների հետ դրանց ունեցած ցեղակցային (մշակութային, ընդ որում դիցաբանական-առասպելաբանական) առնչությունների տեսակետից տարբերակային քննությունը ստեղծում է իրական հիմքեր համեմատական-ստուգաբանական նոր մոտեցման համար՝ կապված ոչ միայն նախագրային հայերենի պատմության առանցքային հարցերի նոր մեկնաբանության, այլև մինչև այժմ այս կամ այն ձևով ստուգաբանված, ինչպես նաև բոլորովին նոր ստուգաբանելի փաստերի հետ:

Նման աշխատանքն, ինչ խոսք, անհրաժեշտ է հայոց լեզվի նախագրային ժամանակաշրջանի հանգուցային խնդիրների ավելի հիմնավոր և համալիր լուծման առումով: Վերջինս ունի առաջնային նշանակություն, որովհետև հ.-ե. լեզուների համեմատական ուսումնասիրության ժամանակակից փուլում հայերենին տրվում է առավել կարևոր տեղ՝ պայմանավորված վերջինիս առավել հնագույն, արխայիկ գծեր ունենալու հանգամանքով [հմմտ. Гамкрелидзе-Иванов 1984, 16-17, 41-43 և այլն]:

Դա կարող է վերաբերել ոչ միայն հայերենի հնչյունական համակարգի ավելի իրական գնահատմանը [տե՛ս նաև Маѣрцофѳер 1988, 530, ծանոթ. 73], արմատական և ածանցական ձևաբանության ստուգաբանական վերականգնմանը, ճշգրտմանն ու բաշխական հարաբերության պարզաբանմանը, այլև հ.-ե. ընդհանրությունից առանձնացած հայերենի հնագույն բնագրերի (տեքստերի) կառուցվածքային սկզբունքների, դիցաբանական-առասպելաբանական համակարգի, բանաստեղծական խոսքի իմաստաբանական առանձնահատկությունների մեկնաբանությանը:

Այսպես, նախահնդեվրոպական լեզուներ կողմերի պատկերացումներում միմյանցից որոշակիորեն տարբեր՝ «խմել (ջուր)» և «ըմպել (զորագուցիչ հեղուկ)» իմաստների համար վերականգնվում են \*ek<sup>[h]</sup> և

\*p<sup>[h]</sup>oH(i)- հիմքերը [տե՛ս Գամկրելիձե-Իվանով 1984, 702-703]: Հայերենում նույնպես «հեղուկ օգտագործել» ընդհանուր գաղափարի արտահայտման համար ունենք տարբեր կոնկրետ իմաստներ կրող ձևեր, որոնք ամենայն հավանականությամբ ծագում են հ.-ե. հիշյալ արմատներից: Ուստի նման մոտեցումով բավականին իրական է դառնում հայերեն որոշակի թվով բառերի և բառարմատների նոր վերլուծությունը: Դրանք գտնում ենք հայերենի ոչ միայն գրական, այլև խոսակցական (բարբառային), ինչպես նաև «մանկական» բառապաշարի ոլորտին վերաբերող ձևերի մեջ:

Ըստ այդմ, կարծում ենք, որ հ.-ե. \*ek<sup>[h]o</sup>- արմատից են ծագում հայ. պայթական և շփական բաղաձայններով արտացոլված հետևյալ արմատներն ու արմատական ձևերը:

1) Խում «խմել», խխում «ծոր», խխումել «ոռոգել», խխումն, խխոջ (այլև խոխոջ/խոխոնջ) «ջրի ձայն», խխոխիլ «հանդգնել, համարձակվել», խխում (բրբռ.), խխմել (բրբռ.) «կուլ տալ, կլանել» և այլն [հմմտ. Աճառյան 1973, 386-387, Դձաուկյան 1967, 119, Չահուկյան 1987, 314, 591 և այլն]:

2) Կում «մեկ ունայ», կմկմայ, կմուկ (բրբռ.) «կոկորդի վերին մասը՝ մինչև քիմքը» և այլն [հմմտ. Աճառյան 1973, 658, Դձաուկյան 1967, 148, Չահուկյան 1987, 591 և այլն]:

Նախ, բերված բառերի մեծ մասը մինչև այժմ չունի որևէ ստուգաբանություն, մյուս մասը համարվել է կա՛ն բնաձայնական բառ, կա՛ն փոխառություն այլ լեզուներից: Այնուհետև, կարելի է կարծել, որ դրանք ծագում են հ.-ե. լեզուների համար վերջին ժամանակներս վերականգնվող ավելի հավանական \*ek<sup>[h]o</sup>- արմատից: Այդ և դրանց հարող փաստերի ուսումնասիրությունը հայերենի գրական և խոսակցական (բարբառային) տարբերակներից եկող տվյալների հաշվառումով, ինչպես նաև ցեղակից լեզուների նորագույն տվյալների օգտագործումով ամբողջովին հնարավոր է դառնում, մանավանդ եթե ելնում ենք համեմատական-տիպաբանական տարբերակայնության ընձեռած տեսական հնարավորություններից, առաջնորդվում համապատասխան սկզբունքներով:

Այնուհետև, հ.-ե. \*p[h]oH(i)- արմատից է ծագում հայ. ըմպեմ (ըմ-պե-մ) բառը: Վերջինիս հետ տարբերակային (վարիատիվ) առնչություն ունեն մաս համբոյր (հ-ամ-բո-յր), բերան (բե-ր-ան) բառերը, եթե նախագրային ժամանակաշրջանի համար ընդունում ենք բո-//պե-, այլև բե- նախնական արմատական տարբերակներ (տե՛ս Համբարձումյան 2003, 41):

Հ. Աճառյանը ըմպեմ-ը հանգեցնում է ումպ «խմելը, խում» արմատին և դիտում իբրև շատուգաբանված բառ [հմմտ. Աճառյան 1977, 599-600]: Գ. Ջահուկյանը, քերևս ոչ անկախ Գ. Ջոլտայից [տե՛ս Solta 1960, 90-91], այդ բառում առանձնացնում է ըմ- և -պեմ բաղադրիչները՝ դրանք համապատասխանաբար հանգեցնելով հ.-ե. \*anti «դիմաց, առջև» կամ \*gndhos «տակ» և հ.-ե. \*pō(i)-/\*pi- «խմել» ձևերին [տե՛ս Ջահուկյան 1987, 52, 144 և այլն]: Նա միաժամանակ գտնում է, որ «ըմպեմ-ի նախածնի վերականգնումը դժվարությամբ է հարուցում», ուստի տեղ է մնում ինչ-ինչ ենթադրությունների, որովհետև «ումպ-ը կազմվել է հայկական հողի վրա՝ ու-ի համաբանական (անալոգիական) վերականգնմամբ» [Ջահուկյան 1987, 187]: Այստեղ անհրաժեշտ է ավելացնել, որ հետագա ուսումնասիրողները հայ. ըմպեմ-ի համար վերականգնում են հ.-ե. \*p<sup>(h)</sup>oH(i)- բայահիմքը, ընդ որում պարզական արմատի բուն ձայնավորին ուղեկցող կոկորդային տարրի առանձնացումով, որպիսի բաղադրությունը հայերենում կարող էր տալ երկար ձայնավոր՝ նախագրային հայերենում, գրավոր շրջանում այն արդեն չի տարբերակվում [հմմտ. Гамкрелидзе-Иванов 1984, 426, 702-703, Мајрхофер 1988, 127]:

6. Վերջին երկու տասնամյակում երևան եկած համեմատական և տիպաբանական ուսումնասիրություններում հայերենին տրվում է առավել կարևոր տեղ ոչ միայն հ.-ե., այլև ցեղակցային այլ միություն կազմող լեզուների շարքում: Տարբեր տեսությունների, գիտական վերլուծության առանձին մտեցումների և սկզբունքների մշակման գործում ի թիվս ուրիշ լեզուների հայերենի տվյալները մույնպես նկատի են առնվում՝ անկախ դրանց ծավալից և ճշգրտված լինելու հանգամանքից:

Հայերենը ավանդական և ժամանակակից համեմատաբանության բնագավառում ուշադրության առարկա է եղել հնագույն (արխաիկ) գծերի, տևական պատմություն ունենալու, հ.-ե. լեզուների առանձնացման ու տարածման դեպքում առանձնացած մնալու և նման այլ հանգամանքների նկատառումով: Այդ բնագավառում գիտական մեծ ներդրում ունեն թե՛ օտարագրի և թե՛ հայ լեզվաբանները: Վերջիններիս զգալի մասը գնացել է ավանդական տեսությունների ժառանգման և ըստ հնարավորին կատարելագործման ու զարգացման ուղիով, մյուս մասը հանդես է բերել ինքնուրույն մտեցում, առաջ քաշել բավականին յուրօրինակ գաղափարներ:

Հնդեվրոպական համեմատական և տիպաբանական ուսումնասիրությունների ներկայիս փուլում, կարծում ենք, անհրաժեշտ է ըստ ամենայնի հաշվի առնել հայերենի նյութը: Վերջինս տարբեր ժամանակներում ի մի է բերված պատմական, ստուգաբանական և այլ կարգի բառարաններում, առանձին ուսումնասիրողների աշխատություններում, հայերենի կենդանի

բարբառներում և այլն: Արդի հայերենագիտության առանցքային խնդիրներից է ոչ միայն դրանց անդրադառնալը, այլև ըստ հնարավորին համալրելը: Այդ խնդրի իրագործման նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել համեմատական և տիպաբանական լեզվաբանության մեջ մշակված սկզբունքներով, հնարավորության սահմաններում առաջ քաշել նոր մոտեցումներ, նոր սկզբունքներ:

Հայոց լեզվի նախագրային և գրավոր շրջանի պատմության ուսումնասիրության մեջ տարբերակային (վարիատիվ) մոտեցմամբ ինչ-որ չափով հնարավոր է լուծել հայերենի և հ.-ե. մյուս լեզուների ցեղակցային առնչություններին վերաբերող շատ հարցեր: Դրանցից առաջնային կարևորություն ունեն լեզվի պատմության, այսպես կոչված, հարաբերական ժամանակագրության ճշգրտումը /մոտեցումն իրականին/, բաղաձայնական, ձայնավորական և այլն տարբերակում ներկայացնող բառերի /բառարմատների/ նոր ստուգաբանությունները, ինչպես նաև ստուգաբանական վերանայումները, ներքին վերականգնման միջոցով նոր օրինաչափության ամրագրումը կամ օրենքի սահմանումը և այլն: Այնուհետև, պարզել, թե հայերենում առկա այս կամ այն տարբերակային ձևը գոյացել է հայկականում<sup>՞</sup>, թե՞ իր դրսևորումներն է ունեցել հ.-ե. ընդհանրության կամ հետագա շրջաններում:

Հ.Աճառյանն իր «Լիակատար քերականության» մեջ ի մի է բերել տարբեր դարերում հայերեն գրավոր հուշարձաններում տեղ գտած ձեռագրական-գրչագրական այն տարբերությունները, որոնք այս կամ այն կերպ արտացոլում են ժամանակի արտասանությունը՝ իբրև բանավոր լեզվի ներթափանցում: Գ.Ջահուկյանը համալրում է դրանք հայերենի բարբառների տվյալներով: Այսուհանդերձ, դեռևս կան զգալի թվով բառեր և բառային ձևեր, որոնք թե գրչագրական և թե բանավոր-բարբառային տարբերակներ են:

## Հ.-Ե. ԾԱԳՄԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

1. Շուրջ երեքուկես տասնամյակ է, ինչ հ.-ե. լեզուների համեմատական-տիպաբանական ուսումնասիրությունը մտել է գիտական հետաքրքրությունների նոր փուլ: Ռուսերեն և օտար լեզուներով երևան եկան մի շարք նոր աշխատանքներ, որոնք միաժամանակ ցույց տվեցին, որ հայերենը, թեև ժամանակագրորեն համեմատաբար ուշ է գրի առնված, սակայն ներկայացնում է այնպիսի կարևորագույն գծեր ու առանձնահատկություններ, որոնք խիստ գնահատելի են լեզուների ոչ միայն ցեղակցության բնույթի, այլև մերձավորության աստիճանի ճշգրտման և վերագնահատման տեսակետից:

Հայերենը պարունակում է հնչյունական համակարգի, արմատաբանության և քերականական կառուցվածքի այնպիսի հնագույն տվյալներ, որոնք հաճախ վճռական դեր են ունենում հ.-ե. ընդհանուր վիճակի ուրվագծման, ցեղակից լեզուների ճյուղային (բարբառային) կամ առանձնակի տրոհման, տիպաբանական մի շարք զուգադիպումների հետ կապված առանցքային խնդիրների լուծման գործում [տե՛ս Աղաբեկյան 1979, այլև 1998, Սիմոնյան 1979]:

2. Տվյալ դեպքում մեզ առավել զբաղեցնում են հ.-ե. արմատի վերականգնման այն սկզբունքային հարցերը, որոնք վերաբերում են արմատի տարբերակայնությանը: Ինչպես գիտենք, հայերենի դեպքում թե՛ նախագրային վիճակի, թե՛ գրավոր շրջանի գրական հուշարձանների տվյալների հիմունքով ունենք բազմաթիվ տարբերակային արմատներ, որոնք ոչ միայն ձեռագրական տարբերակներ են («գրիչների» առաջ բերած տարբեր ձևեր), այլև տարածական, ժամանակային և այլ կարգի տարբերակվածության արդյունք [հմմտ. Աճառյան 1971, 773-842, Джайкян 1967, 300-343 և այլն]:

Նորագույն ուսումնասիրությունների տվյալները ևս ցույց են տալիս, որ հ.-ե. ընդհանուր վիճակի համար գրեթե անհնարին է վերականգնել այս կամ այն արմատը, ձևույթը և այլն, առանց հաշվի առնելու հիմքում ընկած հասկացության, իմաստի նշանակման հասարակական, մշակութային, դիցաբանական և այլն պատկերացումների տարբերակվածությունը: Նախկինում մեզանում երևույթի բնութագրման այս կողմին գրեթե որևէ ուշադրություն չի դարձվել, այլ կերպ ասած՝ երևույթը քննության է առնվել միմիայն հնչյունական-քերականական համապատասխանությունների հիմունքով [տե՛ս Աճառյան 1971-1979, Աղայան 1974, Ջահուկյան 1967, 1982 և այլն]: Ըստ այդմ հ.-ե. ծագման հայերեն արմատի տարբերակային վերականգնման և տիպաբանական վերլուծության խնդիրը դառնում է արդի հայերենագիտության առաջնակարգ լուծում պահանջող բնագավառներից մեկը:

3. Արդեն նշել ենք, որ հ.-ե. ծագման հայերեն արմատի տարբերակային ուսումնասիրության հարցը դարձել է առանձին ուշադրության առարկա մեզանում հատկապես վերջին տարիներին [տե՛ս Համբարձումյան 1997, 149-152, 1998, 2002, 43-59, նաև 2002, 242-260, 2003, 39-43 և այլն]:

Այստեղ շեշտենք, որ հ.-ե. ծագման հայերեն արմատների տարբերակային քննությամբ կարող են լուծվել մի շարք խնդիրներ՝ կապված ոչ միայն առկա մեծ թվով «անհայտ ծագման» արմատների և բառերի ծագումնային պարզաբանման, այլև մինչև այժմ այս կամ այն կերպ ստուգաբանվածների համեմատական-տիպաբանական ճշգրտման հետ:

Հայերենի արմատաբանությունն առհասարակ ենթադրում է ցեղակից լեզուների թե՛ հնչյունական համակարգի և թե՛ քերականական կառուցվածքի ուսումնասիրման բնագավառում երևան եկած նոր փաստերի օգտագործում, ինչպես նաև հնարավորության սահմաններում դրանց ճշգրտում՝ ելնելով առաջին հերթին հայերենի տվյալներից:

4. Այսպես, նախկին խորհրդային և արտասահմանյան լեզվաբանները, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողների ձեռքբերումներից [տե՛ս Pedersen 1951, Martinet 1962, 67-78 և այլն], առաջ են քաշում հ.-ե. պայթական բաղաձայնների համար ավանդաբար վերականգնվող համակարգի վերանայման խնդիրը՝ նկատի ունենալով, որ ոչ ձայնեղ բաղաձայնները պիտի ունեցած լինեն ծերպաձայնային («զլոտալ» կամ «էլեկտիվ») արտաբերություն [Гамкредидзе-Иванов 1972, 15-18, Gamkrelidze-Ivanov 1973, 150-156, Hopper 1973, 141-166, նաև 1977, 41-53, նույնը Хopper 1988, 160-172 և այլն]: Պ.Ջ.Հոպերը գտնում է, որ «արևմտահայերենում այդ պայթականները ոչ շնչեղներ են և թեթևակի ծերպաձայնացած» [Hopper 1981, 133-142, նույնը Хopper 1988, 174, այլև 173-182]: Իսկ Թ.Վ. Գամկրելիձեն և Վ.Վ.Իվանովը կարծում են, որ հայերենի պայթականների համակարգը թերևս առավել հնագույն գծերով է ժառանգում ընդհանուր հ.-ե. վիճակը, և դա, ըստ նրանց, նկատելի է ոչ միայն ներկայիս մի քանի բարբառներում, այլև պիտի արտացոլված լիներ հին հայերենի գրական տարբերակում [Гамкредидзе-Иванов 1984, 17, 41 և այլն]:

5. Նորագույն ուսումնասիրություններում առաջադրվում են տարբեր կարգի խնդիրներ, որոնք վերաբերում են պայթական բաղաձայնների համակարգից շնչեղ խուլերի բացառմանը, հետնալեզվային պայթականների եռարժեք բաշխվածության այդպիսին կամ ոչ այդպիսին լինելուն, հ.-ե. կոկորդային և ձայնորդային հնչյունների որակական կազմի նորովի մեկնաբանությանը և այլն: Վերջիններս այս կամ այն չափով անդրադառնում են հայերենի համապատասխան փաստերի օգտագործման անհրաժեշտությանը:

Այսպես՝ մինչև վերջին ժամանակներս հայ. հետ, այլև ուռն, ետ և յետ տարբերակային արմատների համար վերականգնվում էր հ.-ե. \*pedo- ձևը [տե՛ս Աճառյան 1977, 82-84, Ջահուկյան 1987, 142, 185, 214 և այլն]: Նորագույն ուսումնասիրություններն առաջ են քաշում հ.-ե. տարբերակային \*p[h]et'- // \*p[h]ot'- արմատները, որոնցում \*t' բաղադրիչը, որն ունեցած պիտի լինի ձերպածայնային («զլտալ») արտաբերություն, լավագույնս արտացոլվում է հայերենում (մեսրոպյան խոլ տ գրույթով արտահայտված. բերվում են՝ մի շարք արմատներ՝ առանձին կամ իրենց տարբերակներով հանդերձ, որոնք արտացոլում են այդ երևույթը. հմմտ. տալ «հանձնել, տալ», ուտել, տուն, տի «ցերեկ, օրվա մի կեսը» և այլն):

Նկատի ունենալով հնչյունական այս օրենքի կանոնավոր արտացոլումը հայերենում, ինչպես նաև հ.-ե. \*p հնչյութի ոչ միայն հայ. հ, ւ, կամ թ /զրո/, այլև պ արտացոլումը՝ կարելի է նաև կարծել, որ հայ. ապտակ «(ձեռքի ակոբ) հարված», բառը նույնպես պետք է բխեցնել հիշյալ կարգի արմատական տարբերակներից:

Այս դեպքում նկատի ենք ունենում այն, որ նախ՝ ապտակ բառը հայերենում մինչև այժմ չունի որևէ հավաստի ստուգաբանություն, այնուհետև ցեղակից և ոչ ցեղակից լեզուների տվյալները հավաստում են, որ հ.-ե. \*p[h]et'- // \*p[h]ot'- արմատներն առհասարակ ունեցել են (քնականաբար և համեմատաբար լայն ըմբռնումով) «ոտք» իմաստը, որը ներառում էր «առջևի ոտք կամ հետևի ոտք» կոնկրետ իմաստները: Եվ եթե սա ընդունում ենք, ապա կարող ենք կարծել, որ հայ. ապտակ (ա-պտ-ակ) բառի արմատական բաղադրիչն է լինում -պտ- մասը, և այն բխում է հ.-ե. հիշյալ արմատից (հմմտ. հինդկ. upa-bdā- «դոփյուն», ավ. fra-bda «առջևի ոտք», a-bda, «ոտք դնելու արգելված տեղ», հուն. ἐπι-βδᾶ, «տոնին հաջորդող օր», «մի ոտքի վրա»՝ կոնկրետ իմաստով) [Гамкрелидзе-Иванов 1984, 154-155, Майрхочер 1988, 126, 136-148]: Հին գրական հայերենում ապտակ-ը կոնկրետացել է «ձեռքի հարված» իմաստով՝ ի հակադրություն աքացի (բրբռ. քացի) «ոտքի հարված» իմաստի առաջացման (նշենք, որ վերջինիս արմատն է աք-, որ սկզբնապես նշանակել է «ոտք»): հմմտ. սայթաքել, առաքեալ, առաքինի, բարձրաքեաց և այլն):

Այնուհետև, հայ. համբոյր բառը նախկինում դիտվել է իբրև անհայտ ծագման: Գ.Ջահուկյանը այն կապում է իրան. ham-bōd ձևի հետ [Աճառյան 1977, 25, Ջահուկյան 1987, 530]: Ինչպես նշեցինք վերևում, Աճառյանը հայ. ըմպեն բայը կապում է ումպ ենթադրյալ արմատի հետ, այնինչ Ջահուկյանը «ենթադրում է թեմատիկ կրկնավոր ներկայից» առաջացած՝ գունելով, որ «նախաձևի վերականգնումը դժվարություններ է հարուցում», «ումպ-ը

կազմվել է հայկական հողի վրա» [տե՛ս Աճառյան 1973, 124, նաև 1977, 599-600 , Ջահուկյան 1987, 187]: Այդուհանդերձ, մենք հակված ենք կարծելու, որ հայ. համբոյր (հ-ամ-բո-յր), ըմ-պեմ (ըմ-պե-մ), ինչպես նաև բերան (բե-ր-ան) ձևերի բռ-/պե-, ինչպես նաև բե- բաղադրիչները տարբերակային արմատներ են, որոնք էլ հնչյունական արտացոլման և իմաստային ընդհանրության տեսակետից գտնվում են սերտ առնչության մեջ, և տարբերակումը տեղի ունեցած պիտի լինի հին գրական հայերենին նախորդած վաղ անցյալում: Դրանք հանդիսանում են հ.-ե. \*բ[ի]օհ-, վերջինիս կրկնավոր տարբերակ համարվող \*բ[ի]ր[ի]օհ-, և ըստ Մ.Մայրիոֆերի՝ \*բեհ<sub>3</sub>- և այլն արմատի արտացոլումը [Гамкрелидзе-Иванов 1984, 402, 220, Mayrhofer 1988, 127]. այս նույն տեղում տե՛ս նաև ցեղակից լեզուների համեմատելի ձևերը, իսկ հայ. ան-, ըմ-, համ- «վրա, դեպի» բաղադրիչների համար կարելի է համեմատել նաև հայ. անձեռոցիկ, ըմբռնել, համբոյր և այլն կազմությունները:

6. Հայոց լեզվի արմատի կառուցվածքի ուսումնասիրությունը մինչև վերջին տարիները հիմնականում իրականացվել է Հ.Հյուբշմանի դպրոցի հաստատած սկզբունքների կիրառումով՝ կապված հատկապես հնչյունական օրենքների սահմանման, ցեղակցության աստիճանի բնորոշման հետ: Հ.-ե. լեզուների համեմատական-տիպաբանական նորագույն աշխատություններում առաջ են քաշվում այդ սկզբունքների վերանայման հետ կապված որոշակի խնդիրներ [տե՛ս օրինակ, Гамкрелидзе-Иванов 1984, 31-34, Կորտլանդտ 1983, 54-70, Mayrhofer 1983, նույնը 1988, 507-530 և այլն]: Այսպես՝ հայերենի հնչյունական համակարգի մեջ հ.-ե. հնագույն (արխաիկ) գծերի պահպանումը, որ մեսրոպյան տառադարձությամբ ոչ այնքան ամբողջական և լիարժեք է արտացոլված եղել, կարևոր հիմք է հանդիսանում ոչ միայն հայերենի նախագրային շրջանի, այլև հ.-ե. ընդհանրությանը վերաբերող *ստանձին* երևույթների ավելի լայն և ավելի մանրամասն ուսումնասիրման համար [Mayrhofer 1988, 530, ծանոթ. 73: Տե՛ս նաև Համբարձումյան 2002, 15 և այլն]:

Ըստ այդմ առաջ են գալիս կարևորագույն հարցեր, որոնցից մեկն էլ հ.-ե. ծագման հայերեն արմատի տարբերակային վերականգնմանն ու տիպաբանական վերլուծությանն է վերաբերում, և որոնց լուծման նպատակով անհրաժեշտ է մշակել նոր սկզբունքներ ու մոտեցումներ, այլև կոնկրետ ուսումնասիրություններում ելնել այդ նոր սկզբունքներից ու մոտեցումներից: Վերջիններս պիտի մշակվեն ավանդական սկզբունքների հիման վրա, սակայն լեզվական երևույթների ավելի ծավալուն ընդգրկումով: Նման սկզբունքներից մեկն էլ, կարծում ենք, հայերենի արմատի կազմության, վերջինիս հետ կապված՝ հնչյունական և ձևաբանական (եթե ոչ նաև

շարահյուսական՝ բանաստեղծական խոսքի և այլն) կառուցվածքի տարբերակային-տիպաբանական ուսումնասիրությունն է, որն առանձնապես հայերենի նկատմամբ կարող է կիրառվել ավելի հանգամանալից ձևով:

7. Հ.-ե. արմատի տարբերակային վերականգնումը, բնականաբար, եղել է նաև նախորդ ուսումնասիրողների ուշադրության առարկան, և այս առումով կա որոշակի ավանդույթ: Սակայն նոր մոտեցման կամ սկզբունքի մշակումն ու իրագործումը կարող են դառնալ ուրույն ուսումնասիրության բնագավառ, որն առաջին հերթին նպաստելու է հայերենի առանցքային (հ.-ե. ծագման և համեմատական-տիպաբանական) երևույթների ավելի մանրամասն քննությանը, ինչպես նաև դեռևս չբացահայտված շատ խնդիրների ինչ-որ չափով պարզաբանմանն ու լուծմանը: Այդ երևույթները մինչև այժմ քննության են առնվել զուտ լեզվաբանական տեսանկյունից՝ ինչ-որ չափով շրջանցելով իմացաբանական-իմաստաբանական կողմը, մասնավորապես հ.-ե. ժառանգություն հանդիսացող այն պատկերացումները, որոնք այս կամ այն կերպ արտացոլված ենք գտնում հայկական դիցաբանության, առասպելաբանության և այլ մշակութային դրսևորումներում:

## Հ.-Ե. ԾԱԳՄԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայերենի բառապաշարի մի որոշակի մասը մինչև օրս համարվում է «ամստույզ» կամ չստուգաբանված: Ավանդական համեմատաբանության գործադրած ստուգաբանական միջոցներն ու եղանակները («օրենքները») տարբեր ժամանակներում ունեցել են իրենց դերը հայերենի բառապաշարի բնույթի պարզաբանման գործում: Ոչ միայն այլ ուղղությունների ներկայացուցիչների, այլև հատկապես Հյուբշմանի դպրոցի հետևորդների ջանքերով կատարվել է մեծ աշխատանք:

Վերջին ժամանակներս հայերենի բառապաշարի ստուգաբանական ուսումնասիրության ուղղությամբ ավելի շատ զբաղված են եղել օտարագիտի լեզվաբան-համեմատաբանները, բան թե մեզանում պիտի տեղի ունենար:

2. Ինչպես այլ հարցերում, այնպես և արմատաբանության (հատկապես ստուգաբանության) դեպքում անհրաժեշտ է ոչ միայն նկատի ունենալ այդ բնագավառում ձեռք բերվածը՝ հիմնականում առաջնորդվելով դրանով, այլև հնարավորության սահմաններում առաջ քաշել վերլուծության այնպիսի սկզբունքներ կամ միջոցներ ու եղանակներ, որոնք կարող են նպաստել հետագա աշխատանքների ձեռնամուխ լինելուն:

3. Հայերենի բառապաշարի այն մասը, որն առայսօր մնում է կան հնարավոր ծագման, կամ ոչ բավարար չափով ստուգաբանված, հնարավոր է դարձնել համապատասխան ուշադրության առարկա, եթե այդ նպատակով հնարավոր լինի սահմանել հնչյունական նոր օրենքներ՝ առնված ոչ միայն առանձին հնչյունների, այլև դրանց գուգակցման, վանկի բաղադրության, շեշտի հետ կապված երևույթների վերաբերյալ: Դրանք պիտի սահմանվեն թե՛ գրական լեզվի և թե՛ բարբառների ընձեռած տվյալների հիման վրա, վերջիններիս ժամանակային, տարածական, գործառական տարբերակվածության հաշվառումով: Ինչպես մեկ այլ առիթով նկատել ենք, Հ. Հյուբշմանի և նրա դպրոցի ներկայացուցիչների ուշադրությունից մի տեսակ դուրս է մնացել երևույթի տարբերակային ուսումնասիրությունը՝ բացառությամբ Գ.Ջահուկյանի և այլոց այն աշխատանքների, որոնցում այս կամ այն չափով տեղ է տրվում ստուգաբանական կրկնակներին, բարբառային զուգածներին [տե՛ս Համբարձումյան 2002, 22]:

4. Ինչպես մինչև այժմ կատարված շարադրանքում, այնպես նաև ստորև անդրադառնում ենք որոշակի թվով բառերի ստուգաբանությանը՝ համեմատական-տիպաբանական տարբերակայնության սկզբունքի կիրառումով: Դրանք վերաբերում են իմաստային (թեմատիկ) որոշակի խմբերի և

ըստ այդմ համալրում են այս կամ այն խմբի մեջ մտնող հ.-ե. ծագման բառերի (կամ արմատների) շարքը:

Այսպես, **աստուած** բառի ստուգաբանությամբ, կարծում ենք, հարավոր է դառնում խոսելու բուն հայկական դիցարանի գերագույն աստծու մասին, ինչպես նաև համալրելու, ինչպես ընդունված է կոչել, կրոն և նախապաշարմունք իմաստային (թեմատիկ) խումբը [հմմտ. Ջահուկյան 1987, 50, 273-274 և այլն]: Իրանական դիցարանի ազդեցությամբ փոխառյալ դիցանվան փոխարեն ունենք բնիկ, այն է՝ հ.-ե. ծագում ունեցող **Աստուած** դիցանունը:

Հայ. **ծալի**, այլև **կայթ** բառերի ստուգաբանությամբ մեծամում է հայերենի բնիկ բառերի թիվը, և դրանք այստեղ քննության առարկա են խեթալուվական (անատոլիական) լեզուների հետ ունեցած առնչությունների համատեքստում: Հայերենի և խեթալուվական լեզուների ուսումնասիրության պատմությունը, կարծում ենք, ընդգրկում է երկու փուլ, որի ընթացքում բուն ուշադրության առարկան եղել է համեմատվող լեզուների բառային գուգադիպումների հարցը, այնինչ ոչ պակաս կարևորություն ունեն նաև իմաստաբանությունը, առասպելաբանությունը և այլն:

Քննությունը կատարվում է գրաբարի և բարբառների ընձեռած տվյալների համեմատությամբ, դրանք իբրև տարբերակներ դիտելու և ըստ այդմ այլ լեզուների հետ համեմատելու սկզբունքով, ընդ որում ոչ միայն հնչյունական հայտնի օրենքների հետևողական անցկացմամբ, այլև նորովի մեկնաբանմամբ, նոր(եր)ի ըստ հնարավորին հաստատմամբ:

1. Հայ. աստուած բառը մինչև այժմ չունի հավաստի կամ համոզիչ ստուգաբանություն: Ոչ միայն այդ, այլև հայ. տեր, ցերեկ, գիշեր, արեւազալ, մայրամուտ և այլն բառերն ունեն վաղնջական կամ հնագույն ծագում: Հայ առաքելական եկեղեցին այդ անվանումներին ոչ այնքան հաղորդել է բոլորովին նոր իմաստ, որքան դրանք վերաիմաստավորել է նոր հավատքին համապատասխան՝ պահպանելով հ.-ե. ծագում ունեցող այդ և նման շատ բառերի վաղնջական կամ հնագույն իմաստներն ու նշանակությունները:

Հայ. աստուած բառը պատկանում է մեր լեզվի բառապաշարի բնիկ շերտին և համապատասխանում է ցեղակից լեզուների մի շարք զուգահեռ ձևերի: Բառի կազմության, նրա հետ առնչություն ունեցող արմատների կամ բառաձևերի ներքին վերականգնման դեպքում ևս առաջնորդվում ենք լեզվաբանական տարբերակայնության (վարիատիվության) սկզբունքով [Համբարձումյան 1998, Hambardzumyan 1999]:

ա) Մինչև այժմ երևան եկած դիտարկումների, բանասիրական և աղբյուրագիտական մեկնաբանումների և ստուգաբանական վերլուծությունների մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ. աստուած բառի վերաբերյալ տարբեր ժամանակներում և առանձին հեղինակների կողմից ասվածը չի կարելի համարել անառարկելի ու վերջնական [հմմտ. «Բառգիրք հայկազեան լեզուի», 1-2, 1749-1769. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», 1-2, 1836-1837, Աճառյան 1971, 280-281, Hilmarsson 1983, 5-15, Ջահուկյան 1986, 51-52, այլև Hamp 1984, 87-89]:

բ) Հին հեղինակների մեկնություններն այլ բան չեն, քան աստուած բառի արտաքին նկարագրություն (աստուած < աստ ած կամ էած, ազդու ած, ազդուած, նաև հաստիչ կամ աստ, յաստիս ածող, աս «ասելը, խոսք, նաև շուն») և տուած «տվող» և այլն) [հմմտ. Աճառյան 1971, 281]: Հետագա հեղինակների կարծիքների համաձայն հայ. աստուած բառն ունի իրանական, քրակյան կամ փոյուգիական, ուրարտական և այլն ծագում [հմմտ. Hilmarsson 1983, 5-15, Ջահուկյան 1987, 274]: Հարցի լուծման առումով համեմատաբար ճիշտ ճանապարհով են գնացել այն ուսումնասիրողները, որոնք բառի մեջ փորձել են տեսնել \*տու (կամ \*տուած) բաղադրիչը՝ իբրև առանձին միավոր, այն կապելով հ.-ե. մյուս լեզուների տվյալների հետ: Այս դեպքում նկատի ունենք հներից՝ Կ.վրդ.Շահնազարյանի, իսկ նոր հեղինակներից՝ Վ.Պիզանիի մոտեցումը [հմմտ. Աճառյան 1971, 280-282, Pisani 1969, 257-269, այլև «Հանդէս ամսօրեայ» 1961, 549-562]:

գ) Վ.Պիզանին հայ. **աստուած** բառի համար վերականգնում է \**ǰag'i-diŷ-ag'* ձևը, իսկ Գ.Ջահուկյանը ուշադրության է առնում միայն հ.-ե. \**diŷ*-բաղադրիչը, թեև մեկ այլ տեղում գտնում է, որ «անհավանական չէ նաև (հ)**աստուած** «ի հաստումն ածող, հաստող, հաստատող» մեկնաբանությունը» [տե՛ս Pisani 1969, 269, Ջահուկյան 1986, 52]: Հայ. **աստուած** և (հ) **աստուած** ձևերի միջև կապ տեսնելը գալիս է ավելի վաղ ուսումնասիրողներից, և այն վերջնական ու ստույգ չէ, այլ մնում է հավանականի սահմաններում: Նման կապ տեսնողները որևէ նախաձև չեն վերականգնում, թեև Հ.Պեդերսենը, ոչ անկախ Ֆ.Կլուգեից, մատնանշում է ցեղակից լեզուների այս կամ այն ձևը [հմմտ. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» 1836, 320, Pedersen 1906, 239, 243, 1982, 107, 111, Աճառյան 1971, 281 և այլն]:

դ) Գ.Մելիքիշվիլին փորձել է հայ. **աստուած** բառը կապել ուրարտ. *Aštiuzi* «աստված, աստծու պատկեր» բառաձևի հետ, որը հանդիպում է Արգիշտիի մի արձանագրության մեջ: Կարելի է հակառակը կարծել, այն է՝ ուրարտ. *Aštiuzi* բառի աղբյուրը հայ. **աստուած** ձևն է [հմմտ. Melikishvili 1980, 35-36, այլև Ջահուկյան 2000, 128]: Տվյալ դեպքում ուրարտ. *Aštiuzi* ձևն արտացոլում է հայ. բառի հնչյունական այն վիճակը (հմմտ. *ս > շ*, *ու > յու*, *ծ > զ* հակադրությունները), որում կարող էր ինչ-որ չափով դեր խաղալ նաև սեպագրական ստանդարտի հետ կապված առանձնակիությունը:

2. Հայերենի նախագրային և գրավոր փուլերում երևան եկած տարբերակային ձևերն, անշուշտ, ծագումնաբանական և տիպաբանական քննության առարկա կարող են լինել ոչ միայն ձևական (հնչյունական), այլև իմաստային (արմատի կամ բառի հիմքում ընկած երևույթի անվանման) նկատառումով: Ըստ այսմ, հայ. **աստուած** բառը և՛ ձևով (բառակազմորեն), և՛ իմաստով (հին աշխարհին բնորոշ հասկացության անվանում) կարող է ստուգաբանվել հայերենի ներքին միջոցներով, տիպաբանորեն հիմնավորվել ցեղակից լեզուների մեջ առանձնացվող բոլորովին նոր տվյալներով:

3. Հայ. **աստուած** բառն ունի ոչ թե պարզ, այլ բառակապակցական բաղադրյալ կազմություն: Վերջինիս ծագումնային բացահայտման և տիպաբանական վերլուծության համար իրական հիմք է հ.-ե. լեզուների հետ անցկացվող հնչյունական և իմաստային համեմատությունը: Հայերենի բնիկ բառապաշարի միջ այն ունի առաջնային նշանակություն՝ կապված հ.-ե. ընդհանրությունից եկող հասարակական կառուցվածքի և հոգևոր ըմբռնումների մեջ աշխարհի առասպելական և դիցաբանական ձևավորման հետ: Բառի նոր, տարբերակային (վարիատիվ) մեկնաբանման մեջ կարևոր տեղ ունեն ցեղակից լեզուների կրող ժողովուրդների առասպելական և դիցաբանական տվյալները, որոնց զուգահեռներն ու համապատասխանությունները

գտնում ենք հայոց բանավոր, այլև գրավոր հուշարձանների միջոցով մեզ հասած ավանդություններում:

ա) Հայ. **աստուած** ձևի մեջ առաջին հերթին առանձնացնում ենք **\*տուած** բաղադրիչը. [հմմտ. խեթ. Տիպազ «ցերեկվա աստվածություն», պալ. Կիպազ «նույնը», լուվ. Կիպա- «(երկնքի) աստված», հինդկ. Dyáuh «երկինք», հուն. Ζεύς (սեռ. հոլ. Διός «աստված», լատ. Diouis «աստված» և այլն [հմմտ. Гамкрелидзе-Иванов 1984, 36, 46, 223, 226-227, 242, 777]: Այդ ձևը նույնպես բաղադրելի է, քանի որ ծագումնաբանորեն առնչվում է ցեղակից լեզուների այնպիսի ձևերին, որոնք առհասարակ արտահայտում են «աստված» իմաստն՝ ի վերջո կապվելով «ըոյս տալ», «ճառագել», «փայլել», նաև՝ «թվալ», «երևալ» իմաստներին [տե՛ս Гамкрелидзе-Иванов 1984, 791, Watkins 1974, 101-110]:

Ըստ այսմ, հայ. **\*տուած**, այլև (աւ) - **տուած** անվանումները նախնական իմաստով պիտի նշանակած լինեն «ըոյս», ինչպես նաև «ըոյս տալը»:

բ) Այնուհետև, հայ. **\*տուած** ձևի մեջ առանձնացնում ենք **\*տու** (իմա՝ հնչումով՝ \*տուու) արմատը, որին զուգահեռ են խեթ. šiuš (հայց. հոլ. šiut, սեռ. հոլ. šiunaš, հմմտ. հայ. Մանաս-ար «աստված», քերևս նաև Սիւն-իք տեղանունը), լուվ. Կիպազ «աստված», հինդկ. Dyáuh «աստված» (նաև dyáuh «երկինք»). հմմտ. ուրարտ. Diauhji, որը քերևս փոխառություն է միտ. արիերեցից կամ վերջինիս միջոցով՝ հայերենից), հուն. Ζεύς «երկնքի աստված» (սեռ. հոլ. Διός, միկ. հուն. di-we), հլատ. Diouis, սեռ. հոլ. Jouis, «Յուպիտեր», օսկ. Diúvei «Յուպիտերին» և այլն [Гамкрелидзе-Иванов 1984, 227, 791]:

գ) Բերված ձևերի հիմնական մասը, ինչպես նկատում ենք, իբրև «երկնքի կամ արևի աստված» հասկացության անվանում, ցեղակից լեզուների մեջ հանդես է գալիս որպես հատուկ անուն: Դրանց համար վերականգնվում է (ընդհանուր իմաստով) հ.-ե. \*t'yeu- «աստված» բառարմատը: Հմմտ. հինդկ. devá- «աստված», ավեստ. daēva- «դև», լատ. deus «աստված», di-vus «աստվածային», հիոլ. dia (սեռ. հոլ. dé) «աստված», հիալ. tívar «աստվածներ», պրուս. deiws «աստված», լիտ. diēwas «աստված» և այլն [տե՛ս Гамкрелидзе-Иванов 1984, 791]: Այս ձևից է ամենայն հավանականությամբ նաև հայ. **դի-ք** (< \*տի-եւ, հնչումով՝ \*տի-եու) «աստվածներ» բառը [հմմտ. Չահուկյան 1986, 49]:

դ) Հ.-ե. վիճակի համար առանձնացվում են ոչ միայն այդ, այլ նաև \*t'eyu- և \*t'iyu- արմատները՝ իբրև տարբերակներ: Հատկապես վերջինս՝ հ.-ե. \*t'iyu- «աստված» ձևը նախնական ըմբռնումով արտահայտում էր «օր» իմաս-

տը [հմմտ. Pisani 1969, 257-269, Ջահուկյան 1986, 52], և այն լավագույնս արտացոլված ենք գտնում անատոլիական լեզուներում, ինչպես նաև հայերենում: Հմմտ. անատ. \*Tiu- (խեթ. Šiu-, լուվ. Tija-, այլև Tiyat- «արևի աստված», պալ. Tija- և այլն), ինչպես նաև (ըստ իս) հայ. տիս «ցերեկ», «օրվա մի մասը», քերևս նաև՝ ուրարտ. Šivini «աստված» (դիցանուն) [Гамкрелидзе-Иванов 1984, 792, այլև Ջահուկյան 1986, 45, 48-49], խուտ. \*Šimigi և այլն: Այլ լեզուներում արմատի առկա արտացոլումներից են հինդկ. diva-, divya- «աստվածային» (հմմտ. հայ. տուրնջեան, հնչումով՝ \*տոուրնջեան), հուն, δῖος, լատ. dius (\*diuos) «աստվածային» և այլն [տե՛ս Гамкрелидзе-Иванов 1984, 242]:

ե) Այսպիսով, հ.-ե. հիմք-լեզվի համար վերականգնվող տարբերակային երեք վիճակները՝ արմատի ձայնավորման տարբեր աստիճաններով, ոչ միայն մյուս լեզուներում, այլև հայերենում ունեն իրենց վաղնջական կամ հնագույն արտացոլումները: Եվ դրանք կարող են վերլուծության առնվել արմատակազմության մեջ ևս կիրառելի տարբերակայնության (վարիատիվության) սկզբունքների գործադրումով:

4. Վերևում հայ. \*տուած ձևի մեջ առանձնացրինք \*տու (հնչումով՝ \*տուու) արմատը (հիմքակազմական բաղադրիչը), ուստի -ած բաղադրիչը ներկայացնում է իբրև առանձին երևույթ: Վերջինիս վաղնջական և հնագույն հայերենի փուլերում ունեցած հիմքակազմական (բառակազմական) արժեքի վերաբերյալ մինչև այժմ չունենք հավաստի բացատրություն: Նույնը կարելի է ասել այդ բաղադրիչի ծագման հետ կապված [հմմտ. Ջահուկյան 1998, 5-45 և այլն]:

ա) Կարծում ենք, որ հայ. -ած բաղադրիչն ունի հ.-ե. ծագում, և դա կարելի է հիմնավորել համեմատական լեզվաբանության նորագույն տվյալներով, այլև այդ տվյալների տարբերակային (վարիատիվ) քննության եղանակով: Հայ. -ած մասնիկը ծագում է հ.-ե. \*-os- ձևույթից: Վերջինս, ինչպես նաև \*-s- ձևույթը հ.-ե. լեզուներում, իբրև անվանական վերջավորություններ, հանդես էին գալիս ձևակազմական և իմաստաբանական որոշակի արժեքներով: Այսպես, Թ.Գամկրելիձեն և Վ.Վ.Իվանովը, ոչ անկախ Կ.Շիլդպից, գտնում են, որ հ.-ե. \*-os- և \*-s- վերջավորությունները կազմում էին շնչավորի կամ որպես այդպիսին ընթացվող առարկաների դասային անվանումների ձևերը՝ ի հակադրություն հ.-ե. \*-om վերջավորության, որը կազմում էր ոչ շնչավոր (անշունչ) առարկաների դասային անվանումների ձևերը: Այնուհետև, առաջին դեպքում գործ ունենք ներգործող (ակտիվ), իսկ երկրորդ դեմքում ոչ ներգործող (օբյեկտ հանդիսացող) դասի հետ: Դրանք ըստ էության ամուսնների ուղղական և հայցական ձևերի նշանակիչներ (վերջավորություններ) են [Гамкрелидзе-Иванов 1984, 272]:

բ) Ըստ այսմ հայ. \*տռւած ձևը ընդհանուր նշանակությամբ հանգում է հ.-ե. \*t'iey-os//\*t'iey-s «աստված» ձևին. հմմտ հինդկ, deváh, ավ. daēva- «դև (նախնական իմաստով)», լատ. diuus «աստված», հիւլ. Τύτ «(պատերազմի) աստված», լիտվ. dievas «աստված» և այլն [Гамкрелидзе-Иванов 1984, 272, 375-379]:

զ) Հայ. \*տռւած ձևը գրաբար մատենագրության մեջ առանձին չի գործածվում, այլ հանդես է գալիս աստռւած ձևի մեջ, որն էլ կազմված պիտի լիներ նախագրաբարյան (հնագույն կամ վաղնջական հայերենի) փուլերում: Եվ հին գրական հայերենում մնան կազմությունը քերևս դիտվել է իբրև առանձին բառ, քեև նախկինում պիտի ունեցած լինի բառակազմական (շարահյուսական միավորի) արժեք: Ըստ այսմ, աստռւած բառի հետ համեմատելի է, օրինակ, առաւօտ (առաւատ) բաղադրյալ կազմությամբ բառը, ընդ որում ոչ միայն ձևաիմաստային, այլև շարահյուսական-գործառական առումով:

5. Հայ. աստռւած (<աս-տռւած) բառի աս- բաղադրիչը (իբրև առանձին արմատ) ամենայն հավանականությամբ ծագում է հ.-ե. \*Has- «կրակարան, կրակի աղբյուր՝ կրակ» (հիմքում՝ «արև») արմատից: Ավանդական համեմատաբանության մեջ այդ արմատն ընդհանուր առմամբ ներկայացվում էր առանց կոկորդային տարր պարունակող տարբերակի առանձնացման, այսինքն՝ «կրակ», «այրել», ինչպես նաև, «չորանալ, մոխրանալ», «մոխիր» իմաստային տարբերակների կրող էր հանդիսանում հ.-ե. \*as- արմատը [տե՛ս Pokorny 1959-1969, 3-4]: Հայերենում ունենք զգալի թվով արմատներ, որոնք արտացոլում են հ.-ե. \*Has- կամ \*as- արմատի աճականով կամ առանց աճականի տարբերակները (հմմտ. ազագել, աճիւն, օստիւն և այլն) [ավելի մանրամասն տե՛ս Համբարձումյան 2002, 30-31]:

6. Հայ. աստռւած (քրիստոնեական շրջանում՝ Աստռւած) բառն ունի հնդեվրոպական ծագում, որի համար վերականգնում ենք \*Has-t'iey-os ձևը: Վերջինս հայերենի հնագույն կամ վաղնջական շրջանում առաջացած բաղադրյալ կազմություն է, որի բաղադրիչներն իրենց համարժեք արտացոլումներն ունեն հ.-ե. մյուս, հատկապես խեթալուվական (անատոլիական) լեզուներում:

ա) Ըստ այդմ հայերենի հնագույն կամ վաղնջական ժամանակաշրջանի համար վերականգնվող \*Տռւած ձևը կարող է դիտվել իբրև համարժեք անատոլիական, հնդիրանական, հունական և այլն ձևերին: Հմմտ. Տիւաս (<\*Տիւ-as), պալ. Tiγaz (\*Tiy-az), լուվ. Tiuat (<\*Tiu-at), հինդկ. Dyáuh (<\*Dyah), հուն. Ζεός (<Ze-ús, սեռ. հոլ. Διός<\*Δι-ός), լատ. deus (հլատ. \*Diuois), միկ. հուն. di-we և այլն:

բ) Առայժմ ձեռնպահ մնալով հիշյալ և նման կարգի ձևերի գործառնության, դրանցում գործող հնչյունական համապատասխանությունների ժամանակագրության հետ կապված հարցերի բննարկումից՝ հարկ ենք համարում նշելու, որ հայ. \*տու- ձևից առաջացած կամ նրա հիման վրա բաղադրված \*տուած (իբրև դիցաբանական անվանում՝ \*Տուած) ձևն ամենայն հավանականությամբ պիտի եղած լինի հայոց բնիկ՝ հ.-ե. ծագում ունեցող գերագույն ուժի («լույսի», հետագայում՝ «աստծու») անվանումը՝ «(արևային՝ ցերեկվա) լույս», «լույսի աղբյուր (օջախ)» և «լույս տվող՝ լուսատու» նախագրաբարյան (հնագույն կամ վաղնջական) իմաստների նշանակումով և տարբերակումով:

գ) Հայ. \*տուած (\*Տուած) բառի՝ իբրև դիցանվան (գերագույն աստվածության անվանման՝ քեռնիմի) տարբերակային (վարիատիվ) մոտեցումով իմաստաբանական-տիպաբանական վերլուծությունը կարող է լինել առանձին ուշադրության առարկա, երբ այն համեմատական-տարբերակային բնութայն կառուցի դիցաբանական այնպիսի անվանումների հետ, ինչպիսին են, ասենք, **փեռեկ** «ճեղք», **փեղկ** «կտավե կամ կաշվե վարագույր. վրանի պատ» և այլն: Հայ. **աստուած** բաղադրությունն, իբրև բառային մեկ միավոր, համեմատաբար ուշ շրջանում է դիտվել որպես առանձին երևույթ, սակայն ոչ ավելի ուշ, քան մ.թ. 5-րդ դ. արդեն որպես որոշակի հասկացության անվանում հանդես գալը և ըստ այդմ առանձին բառի արժեքով, ավելի կոնկրետ նշանակությամբ գործածվելը: Եվ պատահական չէ, որ հետագա հեղինակներն իրենց երկերում տարբեր առիթներով փորձում են այդ բառին տալ այս կամ այն բացատրությունը, մեկնաբանել բառի հիմքում ընկած նախնական հասկացության նշանակությունը:

### Հայ. ծաւի ~ լուվ. тауи-

1. Վերջին երկու-երեք տասնամյակում հ.-ե. լեզուների ուսումնասիրության բնագավառում գրվեցին մաս այնպիսի աշխատություններ, որոնցում առաջադրվեցին բոլորովին նոր խնդիրներ, ստեղծվեցին ավանդական դարձած շատ հարցերի վերանայման որոշակի նախադրյալներ: Վերջիններս ինչ-որ չափով վերաբերում են մաս հայերենի և հինանատոլիական (խեթալուվական) լեզուների ունեցած տարբեր կարգի առնչություններին:

Ի տարբերություն մինչև 1970-ական թթ. երևան եկած դասակարգումների՝ խեթալուվական լեզուներն այսօր բաժանվում են ոչ միայն երկու ենթախմբի՝ խեթալիդիական (խեթերեն, լիդիերեն և կարիերեն) և լուվալիական (սեպագիր լուվերեն, հիերոգլիֆյան լուվերեն, լիկիերեն Ա, լիկիերեն Բ և

պալայերեն), այլ երեք առանձին փուլերի՝ վաղ (մ.թ.ա. 18-12-րդ դդ.), միջին (մ.թ.ա. 15/13-8-րդ դդ.) և ուշ (մ.թ.ա. 8-3-րդ դդ.) [հմմտ. Герознак 1978, 4, այլև 1981, 11-12]:

Նման առանձնացման և խմբավորման հատկանիշ են այդ լեզուների ներքին ցեղակցային մերձավորությունը, այլև դրանց հիմքում ընկած բարբառային տարբերակվածությունը [հմմտ. Иванов 1982, 31-32, 48-50]:

2. Հայերենի և խեթալուվական լեզուների առնչությունների հարցերը, սկսած 19-րդ դարի վերջին տասնամյակներից եղել են թե՛ օտար և թե՛ հայ ուսումնասիրողների՝ վիմագրագետների, արևելագետների, լեզվաբանների և ուրիշների ուշադրության առարկան: Այն ավելի մեծ թափ է ստանում 20-րդ դ. երկրորդ տասնամյակից սկսած, երբ արդեն որոշակի չափով վերծանվել էին խեթական սեպագիր արձանագրությունները, առավելապես հաստատվել էր խեթերենի և նրան ավելի մոտ կանգնած մյուս լեզուների հ.-ե. բնույթը [տե՛ս Սպենեան 1920, 48-123, Kronasser 1956, Иванов 1963, Королев 1976 և այլն]:

ա) Հայ լեզվաբանության մեջ այս բնագավառում մեծ ներդրում ունեն հատկապես Գ.Ղափանցյանը և Գ.Ջահուկյանը, որոնց աշխատություններն իրենց հիմնական մասով (հատկապես ստուգաբանական փորձերով) անշրջանցելի երևույթ են հիշյալ լեզուների, մանավանդ սրանց բառապաշարի ստուգաբանական-բառաքննական վերլուծության ոլորտում: Գ.Ղափանցյանի աշխատություններում հայերենի քննարկումը կատարվում է ոչ միայն լեզվաբանական, այլև պատմագիտական, մշակութաբանական-առասպելաբանական հայեցակետից [տե՛ս Ղափանցյան 1961, 147-219, Капанцян 1931, նաև 1947, 1956-1975 և այլն]: Գ.Ջահուկյանը հիմնականում քննության է առնում այդ լեզուների բառապաշարի տարրերը, բառային կազմի ծագումնային զուգադիպումները՝ կատարելով ճշգրտումներ ու լրացումներ, սահմանելով հնչյունական որոշակի օրենքներ [տե՛ս Ջահուկյան 1970, 123-168, 1987, 311-321]: Ընդ որում երկու տիպի լեզուներն էլ դիտվում են բաղաձայնական համակարգում պայթականների տեղաշարժի ենթարկված, որը ներկայացվում է հայերենի դեպքում հեղինակի կողմից առանձնացված հատկանիշներով, իսկ խեթալուվական լեզուների դեպքում՝ այլ հետազոտողների սահմանած հատկանիշների հիման վրա [Ջահուկյան 1970, 130-132, այլև 132-134]:

բ) Հետագայում ևս գրվում են այս բնույթի տարբեր կարգի աշխատանքներ, որոնց հեղինակներն ավելի շուտ անդրադառնում են մասնավոր երևույթների, մանավանդ ստուգաբանության բնագավառում [տե՛ս, օրինակ, Greppin 1980, նաև 1982, 65-71, Kossian 1994, 63-65, Mkrtschjan 1974 և այլն]: Լուվերենի, լիդիերենի և մյուս այլ լեզուների բառապաշարի մանրագնի քննությունից պարզվում է, որ հայերենի բառապաշարի շատ տվյալներ թե՛

հնչյունական օրինաչափություններով և թե՛ իմաստային-հասկացական վերաբերությամբ առնչվում են հիշյալ լեզուների համապատասխան միավորներին:

3. Վերջին տարիներին հ.-ե. լեզուների համեմատական-տիպաբանական ուսումնասիրությանը նվիրված աշխատություններում առաջ են քաշվում այնպիսի դրույթներ, որոնց համաձայն նախահնդեվրոպական վիճակին վերաբերող համեմատաբար ավելի հնագույն (արխաիկ) գծեր ունեն ոչ միայն խեթալուվական լեզուները, որոնք աչքի են ընկնում ավելի վաղ ժամանակներից եկող արձանագրություններով, այլև հայերենը, որի հուշարձանները թեև համեմատաբար ուշ ժամանակից են ավանդված, սակայն նրանում պահպանված են նույնպիսի արժեք ներկայացնող գծեր [հմմտ. Гамкрелидзе-Иванов 1984, Майрхочер 1988, 530 և այլն]:

Հ.-ե. լեզուների ուսումնասիրության ներկայիս փուլում հայերենին հատկացվում է ավելի կարևոր տեղ, քան արվել է նախկինում: Այսօր ծագում են բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծման նպատակով հանդես են բերվում միանգամայն նոր մոտեցումներ, և ինչպես բազմիցս նշում են վերջին երկուերեք տասնամյակում լույս տեսած աշխատությունների հեղինակները, այս դեպքում հայերենի տվյալները բավականին հավաստի են և վստահելի, ներկայացնում են ոչ միայն հնագույն, այլև տիպական այնպիսի գծեր, որոնք առանցքային նշանակություն ունեն հ.-ե. ընդհանուր վիճակի վերականգնման կամ բնութագրման համար, և որոնք նախկինում գրեթե որևէ ուշադրության չէին արժանանում:

Նման հանգամանքների նկատառումով ստորև անդրադառնում ենք հայ-լուվական բառային զուգադիպման մեկ երևույթի: Ի դեպ՝ նշենք նաև, որ նորագույն տվյալների համաձայն՝ այս կարգի զուգադիպումները բավականին մեծ թիվ են կազմում, և դրանք արդյունք են ոչ թե սովորական փոխառության, այլ ցեղակցային ընդհանրության՝ տարբեր լեզուներում ունեցած արտացոլման:

Այստեղ մեր ուշադրության առարկան է հայ. **ծալի** «կապտաշյա» և լուվ. **taḷi-** «աչք» բառային զուգադիպումը:

4. Հայ. **ծալի** բառը գործածվում է 5-րդ դ. գրավոր աղբյուրներում. «Եւ ածեր կացուցաներ աղջիկ մի կոյս մմին համեմատ, գեղով և հասակաւ, աչս **ծալի**, յօնս միակիցս, բիբս խարտեաշս» [Ոսկերեքան, 1, 1962, 660]. «Այս անուն, ասեն, զանգրահեր և **ծալի** փարփառ ի ծնէ» [Բարսեղ Կեսարացի, 1830, 119] և այլն: «Նոր հայկազեան բառարանը» (հ. 1, էջ 1013) բացատրում է «ծովագոյն աչօք. անոյշ կապուտակ տեսանելօք. խայտակն» և աշխարհաբար թարգմանությամբ՝ «պլուզ. անուշաչուփ» իմաստներով: Այս բացատրության մեջ **անոյշ** բառն, անշուշտ, պետք է հասկանալ «հաճելի,

զվարճալի, ախորժելիորեն սիրելի» իմաստներով (նույն տեղում, էջ 217): Հ.Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» (հ. 2, էջ 450) նշվում է «անուշ կապույտ աչքերով» բացատրությունը, որն այլ բան չէ, բան «Նոր հայկազյան բառարանի» բացատրության օգտագործում: Այնուհետև, երկու բառարանում էլ բերվում են բառի գրչագրական տարբերակ հանդիսացող **ծալիք**, **ծալիկ** ձևերը, որոնք այլ կարգի ուշադրության առարկա կարող են լինել (դրանց այստեղ չենք անդրադառնում՝ թողնելով մեկ այլ առիթի):

5. Հ.-ե. **ծալի** բառի ստուգաբանությանը և առհասարակ բառագիտական քննությանը նոր ժամանակներում, որքան մեզ հայտնի է, անդրադարձել են Հ.Աճառյանը և Գ.Ջահուկյանը: Եվ այսուհանդերձ, հայ. **ծալի** բառը մինչև օրս ստուգաբանված չէ, ավելին՝ դիտված չէ որևէ լեզվի հետ հավաստի զուգադիպության կամ համեմատության տեսանկյունից:

ա) Հ.Աճառյանն այս բառի նախկին ստուգաբանական փորձերը համարում է անհավանավան, ընդ որում նաև «Նոր հայկազյան բառարանի» հեղինակների և Ս.Տերվիշյանի փորձերը՝ բառի համեմատությունը հայ. **ծով** արմատական բառի հետ: Նշենք, որ Ս.Տերվիշյանը ժամանակին **ծով** արմատի նախածևը դիտելիս է եղել **ծալ**-ը: Իսկ Հ.Աճառյանն ինքը ենթադրում է կովկասյան լեզուների հետ հնարավոր առնչություն, թեկուզև հարցականով. հմնտ. ավար. zob, դարգ. dzubri, կյուրիհ. ccaw, քաբաս. dzav, ազուլ. zaw, լակ. ssau, նշում է, որ բոլորը նշանակում են «երկիմբ», և ոչ անկախ Տրոբեցկոյից, ընդունում, որ այս ձևերը «ցեղակից են իրար հետ» [Աճառյան 1973, 450]: Հ.Աճառյանը վերջում նշում է, որ «կարելի է ընդունել **ծալի** իբր «երկնագույն» (նույն տեղում):

Իսկ մեկ այլ աշխատության մեջ Հ.Աճառյանը **ծալի** բառին հատկացնում է ուրարտական («խալդյան») ծագում, այսինքն՝ փոխառություն [տես Աճառյան 1940, 181]:

Ինչպես նկատում ենք, հարցի լուծումը մնում է առկախ, ընդ որում որոշակի երկակիության սահմաններում:

բ) Գ.Ջահուկյանն այս բառին անդրադառնում է ավելի ուշ գրված աշխատության մեջ [Ջահուկյան 1987, 436, 609-610]: Հայ. **ծալի** բառը նա համարում է ուրարտ. փոխառություն՝ այդ հարցում հետևելով Հ.Աճառյանին [նույն տեղում, էջ 436]: Այնուհետև, նույն աշխատության մեկ այլ բաժնում, որտեղ խոսվում է հայերենի և արևելակովկասյան (նախյան-դաղստանյան) լեզուների հնարավոր առնչությունների մասին, բառային զուգադիպումների ցանկում բերում է նաև հայ. **ծալի** բառը [Ջահուկյան 1987, 604-615]: Ավելի կոնկրետ դեպքում նշվում է, որ նախ «արևելակովկասյան լեզուներից Հ.Աճառյանը փոխառյալ է համարում 11 բառ», այնուհետև՝ դրանցից մերժելի

են մի քանիսը և ավելացնելի այնպիսիները, որոնցից մեկն էլ ծառի բառն է: Եվ ըստ այսմ՝ հայ. ծառի «կապտաչյա» («երկնագույն») բառը հաստատապես դիտվում է արևելակովկասյան (նախյան-դաղստանյան) լեզուներից կատարված փոխառություններից մեկը. հմմտ. լեզգ. պաբ, հին. պ(պ)ա «երկինք» (նույն տեղում, էջ 609): Հիշենք, որ այս զուգադիպումը, ի թիվս այլոց, նշված էր նաև Հ.Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» (հ. 2, էջ 450):

Այնուհետև, Գ.Ջահուկյանն իր նախորդ աշխատություններից երկուսում խոսում է ոչ միայն խեթալովական և հայկական, այլև այդ երկուսի և կովկասյան լեզուների միջև հավանաբար գոյություն ունեցող առնչությունների մասին՝ կապված ոչ միայն «աչք», այլ նաև «երկնագույն» ընդհանուր հասկացությունների հետ: Այսպես, հ.-ե., խոտաուրարտական և կովկասյան լեզուների առնչություններին նվիրված աշխատության մեջ հեղինակը բազմիցս համեմատության մեջ է դնում հ.-ե. \*dei- «փայլել, ճառագել, շողարձակել» արմատը և սրանից կազմված ձևերը քարթվ. te- «լույս», ten- «տեսանելի դարձնել, լուսավորել», ca- «երկինք» բառերի հետ [Джаукян 1967, 66, այլև 182]: Մյուս կողմից՝ քարթվ. ca- ձևը համեմատվում է լակ. ccab, լեզգ. պաբ, տաբաս. Азав և այլ ձևերի հետ (նույն տեղում, էջ 182): Այստեղ հարկ ենք համարում ավելացնել, որ նույն աշխատության մեջ հ.-ե. \*ok<sup>h</sup>- «տեսնել», այլև \*ok<sup>h</sup>-, \*ok<sup>h</sup>-č- «աչք» և սրանց հարակից ձևերը համեմատության մեջ են դրվում վրաց. սչა «տեսնել», որոշ վերապահությամբ նաև քարթվ. twal- «աչք», այլև վրաց. twal- և այլն ձևերի հետ (նույն տեղում, էջ 98):

Եվ այս ամենից հետո, համեմատաբար ուշ գրված մեկ ուրիշ աշխատության մեջ ուղղակիորեն նշվում է հետևյալը. «Կան բառեր, որոնք ընդհանուր են խեթալովական լեզուների, հայերենի ու կովկասյան (հատկապես քարթվելական) մի շարք լեզուների համար, և որոնց բուն աղբյուրի հարցը մնում է կասկածելի» [Ջահուկյան 1970, 157]: Եվ սրան հարակից՝ տողատակում, իբրև օրինակ, բերվում են նաև մի քանի զուգահեռներ, որոնցից են լուվ. taui- «աչք. ներկա» ~ քարթվ. twal- «աչք» ձևերը:

զ) Ի մի բերելով Հ.Աճառյանի և Գ.Ջահուկյանի բառաքննական և ստուգաբանական վերլուծությունները՝ նկատում ենք, որ դրանցում մի դեպքում որոշ կապ է դիտվում հայ. ծառի և (արևելա)կովկասյան լեզուների, մեկ այլ դեպքում քարթվ. twal-, եթե չասենք նաև ուրարտ. ձևերի միջև:

6. Լուվ. taği- «աչք» բառը գրավոր աղբյուրներում գործածվել է թե՛ առանձին և թե՛ բառակազմական-ձևակազմական բաղադրությունների մեջ. նկատի ունենք հատկապես tawi- կամ dawi-, այլև da-a-u-i-iš (եզ. ուղղ. հոլ.), da-a-u-wa- (հոգն. ուղղ.-հայց. հոլ.), tauwašši- կամ dauwašši- «տեսողական» և

այլն ձևերը [տե՛ս Laroche 1959, 96]: Լուվ. *taui-* ձևի հետ են համեմատում նաև Փոքր Ասիայի հինասուրական առևտրական գաղութներից հայտնաբերված կապադոկյան սալիկներում (մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակի սկիզբ) հանդիպող *Ta-ya-ú-i-ma-an* ձևի առաջին երկվանկ բաղադրիչը [հմմտ. Goetze 1954, 351-352, Laroche 1966, 183, այլև *Гамкрелидзе-Иванов* 1984, 860]:

ա) Եթե նկատի առնենք, որ ունենք մի կողմից՝ խեթ. *š-* լուվ. *t-* (հմմտ. խեթ. *šakuya* «աչք» ~ լուվ. *taui-* «աչք», խեթ. *huiš-yaant-* «կենդանի» ~ լուվ. *huityalí* «կենդանի» և այլն) [տե՛ս *Гамкрелидзе-Иванов* 1984, 861], իսկ մյուս կողմից՝ խեթ. *t* ~ հայ. *ծ* (հմմտ. խեթ. *tahhu(ya)-* «ծուխ» ~ հայ. *ծուխ*, սեռ. հոլ. *ծխոյ*) [տե՛ս Ջահուկյան 1970, 157, այլև 1987, 203, 314 և այլն], ապա խիստ հավանական է դառնում լուվ. *t* ~ հայ. *ծ* զուգադիպումը հնչյունական մակարդակում: Ավելորդ չենք համարում այստեղ խեթ. *šakuya* ~ լուվ. *taui-* «աչք» զուգադիպման համար մեջբերման ձևով նշելու հետևյալը. «Շնչեղների առնչությամբ խեթերենը կանոնավորապես ի հայտ է բերում *š-* այն դեպքում, երբ համապատասխան բաղաձայնը մյուս լեզուների մեջ բացակայում է ... լուվերենում այդ դեպքում խեթ. *š-*ին համապատասխանում է լուվ. *d-*. հմմտ. խեթ. *šakuwa* ~ լատ. *ocu-(lus)* ~ լուվ. *dawi-* «աչք» (*kw > w-* պարզեցմամբ) բառամիջում» [*Иванов* 1982, 33]:

բ) Նշենք նաև այն, որ խեթ. *š* ~ լուվ. *t* համապատասխանության մասին հայտնված է նաև հետևյալ կարծիքը. «Խեթերենում և լուվերենում ի հայտ են գալիս հնդեվրոպական սուլական *\*s-*ի և *\*š-*ի տարբեր արտացոլումները: Հ.-ե. *\*s-*ն, ինչպես հայտնի է, խեթերենում և լուվերենում միակերպ արտացոլվում է իբրև *s* (սեպագիր *š*), որ տալիս է խեթ. *s* ~ լուվ. *s* համապատասխանությունը, այնինչ հ.-ե. *\*š-*ն խեթերենում և լուվերենում արտացոլվում է ոչ միակերպ, որը տալիս է խեթ. *s* ~ լուվ. *t* կարգի համապատասխանությունը այդ լեզուների միջև հմմտ. խեթ. *šakuya* «աչք-(եր)» ~ լուվ. *taui-* «աչք-(եր)» [*Гамкрелидзе-Иванов* 1984, 122]: Իսկ հնչյունական համապատասխանության առումով, ինչպես գիտենք, խեթ. *k-* լուվ. *∅* հարաբերակցությունն է դիտվում:

գ) Ըստ այսմ կարելի է հաստատել խեթ. *s* (սեպագիր՝ *š*), լուվ. *t* ~ հայ. *ծ* հնչյունական զուգադիպումը, ընդ որում հայ. *ծ*-ն թերևս մոտ է հ.-ե. *\*š-*ի դիմաց լուվ. միջնատամնային *θ* արտասանությանը [*Гамкрелидзе-Иванов* 1984, 122]:

Եվ այս տեսակետից առավել ուշագրավ են դառնում հայ. *ծ* ~ տ կամ *ս*, ինչպես նաև հայ. *ց* ~ *շ*, եթե ոչ նաև *ք(ս)* հնչյունական տարբերակումները.

հմնտ. արածել ~ արատ, ծածանել ~ տատանել ~ սասանել, վեց ~ վեշ (տասան), այլև վաթ(սուն), (բրբռ.) վաջում և նման մի շարք տարբերակներ:

Նման զուգադիպումը բավականին հիմնավոր է, մանավանդ եթե նկատի ենք առնում հիեր. լուվ. տ, խեթ. z (թերևս s) և l, այլև հայ. ծ հնչյունների արտասանական մերձավորությունը (մոտիկությունը). անատոլիական լեզուներում դրանք կողքային (լատերա) հնչյւյթներ են եղել, ինչ-որ չափով մոտ կիսաշփականների (հպաշփականների) [Иванов 1963, 76-77, այլև 97-98]:

7. Հայ. ծախի և լուվ. тауі- զուգադիպումն ունի հ.-ե. ծագում: Այս դեպքում ամենից առաջ պետք է նկատի ունենալ նաև հ.-ե. ժողովուրդների մեջ եղած այն առասպելաբանությունը, որն իր արտացոլումն ունի ցեղակից զգալի քվով լեզուներում, և որի համաձայն լույսը (տվյալ դեպքում՝ արևը) ծագում է ծովից: Թե որքանով է այս ասքը, առասպելը պահպանվել հ.-ե. այդ երկու ժողովուրդների պատմական-առասպելական «հիշողության» մեջ, դա այլ հարց է, իսկ տվյալ դեպքում դեռևս չենք անդրադառնում հարցի այդ կողմին, ոչ էլ փորձում ենք հայ. ծախի-ն կապել ծով և այս արմատի այլ դրսևորում հանդիսացող մյուս ձևերի հետ:

### Հայ. կայթ ~ հիեր.լուվ. gati-

1. Հայերեն կայթ «կողով, աման» և հիերոգլիֆյան լուվերեն gati- «քարե գավ, աման» զուգադիպումը մինչև այժմ չի եղել համեմատական-ստուգաբանական քննության առարկա որևէ ուսումնասիրողի կողմից:

